

Վ. ԴԱԳԵՍՅԱՆ

---

ՄԵԳՈՒՆԵՐԻ ՓԹԱՍՏ ՀԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ  
ՅԵՎ  
ՆՐԱ ԴԵՄ  
ՊԱՅԿԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԴՅՈՒՂ ՀՐԱՏ-ՅԵՐԵՎԱՆ

---

1 9 3 5

18 DEC 2017

Վ. ԴԱԳԵՍՅԱՆ

ՄԵՂՈՒՆԵՐԻ ՓՏԱԽՏ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Յ Ե Վ

ՆՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ



Վերոհիշյալ աշխատությունը նախված յեվ խմբագրված  
է մեղվարուծ-մասնագետներից կազմված հասուկ  
հանձնաժողովի կողմից, վորին մասնակցել են  
Հ. Հատարյան, Հ. Սարուխանյան, Ռ. Քալանթարյան,  
Հ. Տեր-Ավագյան, Խ. Տեր-Ավագյան յեվ Դր. Բաղ-  
դասարյան



11-241849

Կուսակցության 17-րդ համագումարում ընկ. ՍՏԱԽՆՆ  
իւր հաշվետու զեկուցման մեջ մատնանշեց, վոր «անասուն-  
ների քանակի առպարիզում հաշվետու ժամանակաշրջա-  
նում մենք ունենք վոչ թե վերելք, այլ դեռևս շարունակ-  
վող անկում՝ նախապատերազմյան մակարդակի համեմա-  
տությամբ»:

Ընկ. Ստալինի այդ ցուցումը—ինչ խոսք, վոր խոշոր  
չափով վերաբերում է նաև մեղվարուծությանը, վորովհե-  
տև վերջինս անասնապահության մի ձուղն է կաղմում:

Այս տեսակետից «անասնապահության բարձրացումը  
պահանջում է վճռաբար ուժեղացնել համաճարակ հիվանդու-  
թյունների դեմ մղվող պայքարը...» (Համ. Կ. (բ) Կ. Անդր-  
յերկումի 34 թ. հունիսյան պլենումի վորոշումներից):  
Ի՞նչպես է ընթանում այդ պայքարը մեզ մոտ, Հայաստա-  
նում, մեղվարուծության բնագավառում:

Մենք ամեն տարի հսկայական գումարներ ենք ծախ-  
սում մեղուների ընտանիքների միայն քանակական թիվը  
բարձրացնելու համար, սակայն համարյա բոլորովին աչքա-  
թող ենք անում այն փաստը, վոր մեղուների փտախտ  
հիվանդությունն ամեն տարի հսկայական փրաններ է  
հասցնում մեղվարուծությանը, պատճառ է դառնում հա-  
զարավոր ընտանիքների փչանալուն, իսկ մենք գրեթե վո-  
չինչ չենք անում, կամ ռաս քիչ բան ենք անում այդ հի-  
վանդությունը կանխելու յեվ նրա դեմ վնասակար պայքար  
կազմակերպելու համար:

Փտախտ հիվանդությունը վարակում է մեղուների  
վորդերը, ուժեղ կերպով թուլացնում ընտանիքները,  
փչացնում նրանց, իսկ յեթե այդ թուլացած, հիվանդ է

նույնիսկ փչացած ընտանիքներն անուշադրության և նա մատնվում, անխնամ են մնում, հիվանդությունը տարածվում է ամբողջ մեղվանոցում, հետո տարածվում ամբողջ գյուղում, շրջանում և վոչնչացնում մեղուների հազարավոր ընտանիքներ:

Մեղվապահներից մի քանիսն անհոգ և անբարեխիղճ վերաբերմունք են ցույց տալիս իրենց հանձնված գործին: Ուրիշներն իրենց անզիտակցության պատճառով շատ դեպքերում անտեղյակ լինելով այդ հիվանդության առկայությունը, տարբեր պատճառների յեն վերադրում ընտանիքների փչանալը և չեն կարողանում նախադուրշական միջոցներ ձեռք առնել փտախտի դեմ: Այսպիսի դեպքերում հիվանդությունն ավելի շատ է տարածվում, տուժում է մեղուների արտադրողականությունը և դժվար է լինում պայքարել այդ հիվանդության դեմ:

Փտախտի պատճառած հսկայական վնասներից խուսափելու համար անհրաժեշտ է ձեռք առնել հետևյալ նախազգուշական միջոցները:—

1. Վորջան հնարավոր է, մեղվանոցում չունենալ և չպահել մեղուների թույլ ընտանիքներ, վորովհետև վերջիններս միշտ և ավելի շատ յենթակա յեն հիվանդության, և ավելի շատ են տուժում, քան թե ուժեղները: Այդպիսի ընտանիքների առկայությունը դեպքում անհրաժեշտ է առանձին ուշադրություն առարկա դարձնել, փոքրացնել նրանց արկանոցը և հնարավորություն տալ, վորպեսզի կարողանան պաշտպանվել հարձակումներից: Յեթե պատահի, վոր հարձակումները հեշտությամբ արգելել չի հաջողվում, անհրաժեշտ է նույնիսկ ժամանակավորապես փակել արկանոցը, մինչև վոր վտանգն անցնի:

2. Առանց նախապես վստահ լինելու, թե բացարձակապես հիվանդությունից զերծ է սվյալ փեթակը կամ այն փեթակը, վորտեղից կատարվում կամ կատարվելու յե փոխադրումը, վոչ մի դեպքում մի փեթակից մի այլ փե-

թակ մեղուներ, շրջանակով վորդեր, մեղր կամ շրջանակ չաեղափոխել, նույնպես և մի մեղվանոցից մի այլ մեղվանոց, կամ մի շրջանից մի այլ շրջան:

3. Չկերակրել մեղուներին տարբեր տեղերից ձեռք բերված մեղրով, առանց նախապես ապահով լինելու, վոր այդ մեղրը չի վերցված հիվանդությունով վարակված ընտանիքներից: Այդպիսի մեղրով մեղուներին կերակրելու համար անհրաժեշտ է նախ նրա հետ խառնել հավասար քանակությամբ ջուր, յեռացնել առնվազն 40—50 րոպե, և հետո կերակրել:

4. Առանց նախապես մաքրելու և ախտահանելու չգործածել տարբեր տեղերից կամ տարբեր մեղվանոցներից ձեռք բերված գործածված փեթակներ, շրջանակներ, գործիքներ և այլն:

5. Չգնել և չվաճառել մեղուների հիվանդ ընտանիքներ, կամ նրանցից հենց նոր ստացած բնական կամ արհեստական ձագեր: Յեթե կան հիվանդ ընտանիքներից ստացված բնական ձագեր, տեղավորել այն միմիայն մոմաթերթով շրջանակներ ունեցող փեթակների մեջ, և վոչ թե գատարկ չեչերի վրա:

6. Պետք է խուսափել պրիմիտիվ ձևով պատրաստված մոմաթերթ գնելուց և գործածելուց, վորովհետև այդ ձևով պատրաստված մոմաթերթի մոմը, յեթե ստացված է հիվանդ ընտանիքներից, կարող է վարակման պատճառ հանդիսանալ: Միշտ նախապատվություն պետք է տալ պետական արհեստանոցներում պատրաստված մոմաթերթին:

7. Չպահել թույլ, անպտղաբեր և յերկու տարեկանից քարձր հասակ ունեցող մայրեր:

8. Տարբեր մեղվանոցներից մայր ստացվելու դեպքում, յեթե հիվանդության վորևե կասկած կա, նախ պետք է նրա հետ յեկած մեղուները և պաշարը (լինելու դեպքում) վոչնչացնել, իսկ մորը տեղափոխել մաքուր մայրավանդակի մեջ և հետո հանձնել վորոշված ընտանիքին:

9. Հիվանդ ընտանիքների հետ աշխատելիս անզգուշաբար դեռ ու դեն չդնել, կամ այս ու այն տեղից չկախել, ինչպես վոմանք անում են, քամած մեղրով կամ հիվանդ վորդերով լի շրջանակները: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է վարակված գործիքները միայն մաքրելուց և ախտատահանելուց հետո գործածել:


10. Աշխատանքը վերջացնելուց հետո անպայման ձեռքերի վրայից մաքրել մեղրի, մոմի կամ ակնամոմի հետքերը, հետո ոճառով մաքուր լվանալ և ախտահանել սուլեյմանի լուծույթով:

Այս նախազգուշական միջոցներից հետո անհրաժեշտ է անընդհատ բարեխղճորեն հետևել մեղուների ընտանիքների ընդհանուր զբուժյանը, տարբերել հիվանդ վորդերն առողջներից, վաղորոք հայտարարել գոյություն ունեցող հիվանդությունները, վորոշել նրանց տեսակը և համապատասխան միջոցների դիմել նրանց դեմ պայքարելու համար, վորովհետև չի կարելի միյեվնույն մեքողներով պայտար մղել փսախսի բոլոր սեսակների դեմ: «Աշխատել ամերիկյան փսախսը բուժել այնպիսի մեքողներով, վորոնք գործադրելի չեն միայն յեվրոպական փսախսի դեմ, նեանապես և հիվանդությունն ավելի սարածել, քան թե այն բուժել» (Ֆիլիպս): Այս խիստ կարևոր կետը պետք է պարզ լինի բոլոր մեղվապահների և բոլոր նրանց համար, վորոնք, այսպես թե այնպես, գործ են ունենում մեղուների հետ, և կամ մասնակցում են փտախտի դեմ մղվելիք պայքարին:

Վորպեսզի մեղվապահը կարողանա հիմնականում լավ ճանաչել փտախտի տարբեր ձևերի ախտանշանները, ստորեվ համառոտակի տալիս ենք ներկայուծս մեղվաբուծության մեջ ճանաչված փտախտի յերեք տեսակների (ամերիկյան, յեվրոպական և սուպրակաձև) նկարագրությունը:

Ամերիկյան փտախտը մեղ մոտ կոչում են նաև «փակ վորդի փսախս», «կնքված վորդի փսախս» կամ «վորդի ժանսախս» և այլն: Այս հիվանդությունը, առավել կամ նվազ չափով, տարածված է այն բոլոր շրջաններում, վորտեղ մեղուներ կան:

Այս հիվանդությունը խոշոր վնաս է հասցնում մեր




Նկ. 1. Ամերիկյան փտախտի տարբեր ախտանշանները. ա — բջձի փոս ընկած սերեկ, բ և գ — ծակոտ կենսերեկներ, դ և յ — մահացած վորդեր, զ — վորդից մահացած թեփուկը, ե և լ — մահացած հարոնյակներ, թ — հարոնյակից մահացած թեփուկը

սոցիալիստական մեղվաբուծությանը, նրա հիմնական զարգացմանը. առանց վարանումի կարելի չէ ասել, վոր ամերիկյան փտախտն ամենախոշոր, բայց և այնպես հաղթահարելի չարիքն է:

Ամերիկյան փտախտի նշաններն (նկ. 1, 2, 3) առհասարակ յերևան են գալիս այն ժամանակ, յերբ վորդն արդեն մեծացած է լինում և բջիջը լցրած, դադարել է կերակրվելուց, փակվել է բջջում և սկսել է հարսնյակի կերպարանք ստանալ:

Առաջին նշանը, վոր կարելի չէ նկատել, դա այն է, վոր վարակված վորդն սկսում է գորշ գույն ստանալ և կորցնել իր բնական կապտավուն սպիտակ գույնն ու կլոր ձևը: Այս վիճակում հիվանդությունն առհասարակ շատ մեղվապահների կողմից դժվարությամբ է ճանաչվում:

Վորդն աստիճանաբար սկսում է նեխել, ցածրանալ, ավելի մուգ գույն ստանալ և կոնակի վրա վայր ընկնել



Նկ. 2. Ամերիկյան փտախտը թեկանման ձգվում է:

բջջի ցածր կողքին: Այս աստիճանում հիվանդ վորդի ողակավորումը շատ հաճախ պարզ յերևում է. վորդը հետքահետե սկսում է լիովին չորանալ և ստանում է խիստ մուգ-գորշագույն կամ սրճագույն տեսք: Այս ժամանակն է, յերբ յերևան է գալիս հիվանդության ամենացայտուն և գլխավոր ախտանշանը: Փտումի այդ աստիճանում, յեթե մի լուցիկ կամ նման մի բան խրենք նրա մեջ և կամաց յեա քաշենք, կտեսնենք, վոր փչացած վորդի այդ մնացորդը կպչում է նրան և մի քանի սանտիմետր յերկարությամբ թեկանման գուրս է ձգվում բջջից (նկ. 2):

Ամերիկյան փտախտից մահացած վորդն ունի իր հատ-

վանշական և սովորաբար ազդեցիկ հոտը, վորն ավելի շատ նմանվում է հալած սոսնձի հոտին: Վորդը հետզհետե չորանալով կորցնում է իր մածուցիկությունն ու հոտը և պարզ թեփուկի յե վերածվում: Վերջինս շատ ամուր կպչում է բջջի կողքին և մեղուների համար շատ դժվար է առանց բջիջը քանդելու պոկել այն և մաքրել բջիջը: Այդ թեփուկները կարելի չէ շատ հեշտությամբ տեսնել, միայն թե շրջանակը պետք է այնպես բռնել, վոր լույսն ընկնի բջջի հատակին:

Ամերիկյան փտախտով վարակված վորդերի մեծ մասը փչանում է բջջի սերեկվելուց հետո: Հաճախ մեղուներն ամբողջությամբ քանդում են այդ սերեկը, իսկ վորոնք չեն քանդված, առհասարակ փոսացած են լինում և հաճախ ծակված են (նկ. 1—բ, գ): Յերբ առողջ վորդերը դուրս են գալիս, շրջանակի չեչի վրա ցրված զրությամբ յերևում են փչացած վորդեր պարունակող բջիջների փոսացած և ծակոտկեն սերեկները:


Յերեմն դեռ լրիվ չհասունացած հարսնյակներն ևս մահանում են ամերիկյան փտախտից (նկ. 1—ե, ը): Նրանք ևս դառնում են մածուցիկ, ունեն նույն յուրահատուկ հոտն ու գույնը:

Մահացած հարսնյակի լեզուն հաճախ կպած է լինում բջջի վերի կողքին (նկ. 1—ե, ը) և այդպես մնում է նույնիսկ թեփուկի վերածվելուց հետո (նկ. 1.): Շատ հազվադրուտ դեպքումն է պատահում, վոր ամերիկյան փտախտից սատկում են ավելի յերիտասարդ վորդեր:

Սովորաբար ամերիկյան փտախտով վարակվում են բանվորացու վորդերը, բայց յերբեմն վարակվում են նույնպես մայրացու վորդերը և բոռավորդերը:

Ամերիկյան փտախտն առաջ է գալիս լարվիի բացիլ (Bacillus larvae) կոչված որգանիզմների միջոցով: Դրանք շատ փոքր բացիլներ են, վորոնց մանրադիտակով հազիվ կարելի չէ լինում տեսնել: Այդ բացիլները կերակրման

միջոցով անցնում են մեղունների վորդերի մարտողական գործարանի մեջ, ուր ապրում, բազմանում և փչացնում են վորդը: Բայց հենց վոր բացիլներն անցնում կամ ընկնում են մեղրի, մոմի կամ ալհամամի մեջ, կամ յերբ վարակումից փչացած վորդն սկսում է թեփուկի վերածվել, անմիջապես կծկվում, ձևափոխվում են սպորի (ձվիկ): Սպոր կազմող բացիլը նախ սկսում է կծկվել, նրա միջի ջրային մասը դուրս է արտաքսվում, իսկ մնացած մասը խտանում է, ձվիկի ձև ստանում և իվերջո շատ պինդ



Նկ. 3. ա—սերեկված առողջ վորդի տեսքը, բ—ամերիկյան փտախտից մահացած վորդի թեփուկը, գ—հարմայակից մնացած թեփուկը, (ա, բ, գ—բջջի յերկարությամբ կտրելից դիտված):

թաղանթով ծածկվում: Այդպիսի ամուր թաղանթի մեջ պարփակված բացիլը, վորը հենց այդ վիճակում կոչվում է սպոր, շատ ու շատ ավելի յե դիմանում աննպաստ պայմաններին, քան թե «Լարվիի բացիլն» ինքը, կամ առհասարակ այլ բացիլներ:

Ըստ Դոկտոր Ուայտի տվյալների, ամերիկյան փտախտի առանձին սպորները դիմանում են ամենասառը ցրտին, վորը կարող է տեղի ունենալ մեղվանոցի պայմաններում: Այդ սպորները յեռացրած ջրի մեջ կարողա-

նում են դիմանալ տասնյակ ըրպեներ. 90° Ցել. տաք ջրի մեջ՝ մեկ ժամից ավելի, 107° Ցել. տաքություն ունեցող զուտ մաքուր մեղրի մեջ՝ 40 ըրպեյից ավելի, 50% կարբոլյան թթվի լուծույթի մեջ, վորտեղ այլ բացիլներ շատ քիչ կարողանում են դիմանալ, «Լարվիի բացիլի» սպորները դիմանում են ամիսներով, 10% ֆորմալինի լուծույթի մեջ՝ ժամերով և 20% ֆորմալինի մեջ՝ ըրպեններով: Իսկ յեթե այդ սպորները մեծ քանակությամբ և միատեղ լինում են մեղրի, մոմի կամ ալհամամի մեջ, շատ ավելի յերկար են դիմանում, քան վերևում մասնանշվեց:

Թե պրոֆ. Ֆիլիպսի և թե դոկտոր Ուայտի ասելով սովորական դեղերն ինչ ձևով ել լինեն (ծծմբի, ֆորմալինի ծուխ տալը) բոլորովին չեն ազդում այդ սպորների վրա:

Վտմանք կարծում են, վոր ամերիկյան փտախտով վարակված փեթակը, շրջանակները կամ այլ մեղվաբուծական իրեր 1—2 տարի անոգտագործելի մնալուց հետո կարելի կլինի ոգտագործել՝ առանց հիմնովին մաքրելու և ախտահանելու: Իս շատ մեծ սխալ է: Փաստերն ապացուցում են, վոր այդ բացիլներն իրենց սպոր վիճակում կարողանում են անհամեմատ ավելի յերկար ժամանակ, նույնիսկ 30—40 տարի կենդանի մնալ առանց վնասվելու և նպատավոր պայմաններում դարձյալ կարողանում են նույն հիվանդությունն առաջացնել: Սա մի հանգամանք է, վորը պարտավորեցնում է յուրաքանչյուր գիտակից մեղվապահի յալ համոզվել, թե վորքան զգույշ պետք է լինել ամերիկյան փտախտի տարածումը կանխելու համար:

Ամերիկյան փտախտն յերբ մուտք է գործում վորեւ ընտանիքի մեջ, մնում է այնտեղ, դանդաղ, սաստիճանաբար փչացնում է վորդերը և իվերջո փչացնում է այդ ընտանիքը, յեթե մեղվապահը ժամանակին միջոցներ ձեռք չի առնում հիվանդությունը վերացնելու համար:

Յերբեմն, դեռ վաղ զարնանը, ուժեղ ընտանիքներն

ևս վարակվում են ամերիկյան փտախտով: Նրանք վնասվում են նաև ամբողջ ամառվա ընթացքում և կարողանում են վորոշ չափով բերք հավաքելու ուժ ունենալ, և, նպաստավոր պայմաններում, ամբողջ ձմեռ պահպանել իրենց գոյութունը: Բայց և այնպես հաջորդ գարնանը, շատ թուլացած լինելու հետևանքով, չեն կարողանում նույնիսկ իրենց ունեցած պաշարը պաշտպանել և յենթակա յեն լինում հարձակման: Առողջ և ուժեղ ընտանիքների կողմից տեղի ունեցող այդ հարձակումն այնքան վաղ գարնանն է սկսվում, վոր շատ դեպքերում մեղվապահի ուշադրութունից վրիպում է: Հետևանքն այն է լինում, վոր վաղ թե ուշ հիվանդութունն յերևան է գալիս հարձակվող ընտանիքների մեջ: Իսկ այն ընտանիքները, վորոնք դեռ աշնանից արդեն թուլացած են լինում փտախտի պատճառով, հարձակման են յենթարկվում նախքան ձմեռանոց գնալը, կամ յեթե ձմեռանոց են գնում, այնտեղ են փչանում:

Այս բոլորից պարզ յերևում է, վոր յերբ մի ընտանիք թուլանում կամ փչանում է ամերիկյան փտախտից, այդ հիվանդության տարածման աղբյուր է դառնում և նրանից վարակվում են կամ կարող են վարակվել մեկ կամ մի քանի ընտանիքներ: Այդ նոր վարակված ընտանիքներում հիվանդութունը կարող է յերևան գալ շատ վաղ կամ շատ ուշ, նույնիսկ հաջորդ տարին, նայած թե ինչպիսի ժամանակ է փեթակ բերված վարակված մեղրը և յերբ է գործադրվում այդ մեղրը վորդերը կերակրելու համար: Յեթե վարակված մեղրը քիչ քանակությամբ է բերված և զրված բջիջների հատակին և նրա վրա յել նոր մաքուր մեղր է ավելացրած, հիվանդութունը կարող է յերևան չգալ, մինչև վոր այդ վարակված մեղրը չգործադրվի վորդեր կերակրելու համար:

Յեթե վարակված մեղրը փեթակ է բերվում վաղ գարնանը և անմիջապես գործադրվում վորդեր կերակրե-

լու համար, անտարակույս, հիվանդութունն ավելի շուտ է յերևան գալիս:

Այս բոլորը գալիս են կրկին անգամ ասելու, վոր իսկապես շատ անհրաժեշտ է, հնարավորության սահմաններում, վաղորդ հայտաբերել մեղվանոցում գոյութուն ունեցող հիվանդութունները և նրանց տարածումն արգելելու համար ձեռք առնել յսխտ նախագգուշական միջոցներ:

Ամերիկյան փտախտի դեմ մղվելիք պայքարի հաջողութունն ապահովելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ միջոցները, մեծ մասամբ պրոֆ. Ֆրիլպսի կողմից հանձնարարված.—

1. Ամերիկյան փտախտով վարակվում են թե՛ ուժեղ և թե՛ թույլ ընտանիքները: Այդ վարակումը կարող է պատահել տարվա բոլոր յեղանակներին, յերբ մեղունները կարող են թռչել:

2. Յերբ ամերիկյան փտախտը մուտք է գործում մի փեթակ և մեղվապահը միջոցներ ձեռք չի առնում և վերացնում այն, նախքան ընտանիքի փչանալը, այդ հիվանդութունը վոչ մի դեպքում չի անհետանա փեթակից, վորովհետև մեղունները չեն կարող մաքրել, վերացնել այն:

3. Մեղրաբերը շատ քիչ է ազդում այդ փտախտի ընթացքի վրա: Յերբ առատ բերք է բերվում փեթակ, մեղուններն ավելի շատ վորդեր են խնամում, քան թե բերքի սակավ տարիներին և ամերիկյան փտախտի դարգացման համար ավելի շատ հնարավորութուններ են լինում: Ըստ վորում կարելի յե յենթադրել, թե մեղրաբերը ընթացքում հիվանդութունն ավելի արագ կարող է տարածվել տվյալ ընտանիքի ներսում: Բայց ուժեղ բերքի ժամանակ, յերբ վորդերի կերը պատրաստվում է թարմ նեկտարից և վոչ թե փեթակում յեղած հին և վարակված մեղրից, կարելի յե յենթադրել, վոր տվյալ ընտանիքում հիվանդության ընթացքն ավելի դանդաղ է և նվազ ակներև:



Մեղրաբերքի շատ սակավ տարիներին հիվանդությունից թուլացած կամ հանգած ընտանիքներն ավելի շատ են հարձակման յենթարկվում և հիվանդությունն ավելի արագ ե տարածվում մյուս ընտանիքների մեջ:

4. Մեղունների բոլոր ցեղերն ել վարակվում են ամերիկյան փտախտով:

5. Ամերիկյան փտախտը վարակիչ ե:

6. Լազվիի բացիլը չի նկատվում վոչ յեվրոպական փտախտի, և վոչ ել տալրակաձև փտախտի մեջ, և այնտեղ, վորտեղ այդ բացիլը զարգանում ե, տարբեր բացիլներ չեն զարգանում:

Սխալ ե կարծել, վոր ամերիկյան փտախտը կարող ե յեվրոպական փտախտի փոխվել և կամ հակառակը:

7. Յերբ վորզը մահացած ե, իր փտումի ընթացքում, ինչպես նաև չորանալուց և թեփուկի վերածվելուց հետո, շատ ամուր կպչում ե բլջի ցածր կողքին և մեղունները, նույնիսկ ամենանպաստավոր պայմաններում, նրա մնացորդներից չեն կարողանում ամբողջությամբ մաքրել բլջիները:

8. Ամերիկյան փտախտն ընտանիքից ընտանիք տարածվում ե առհասարակ վարակված մեղրի միջոցով: Հիվանդ ընտանիքներում մեղրը վարակվում ե այն ժամանակ, յերբ մեղունները մեղրը լցնում կամ տեղափոխում են մի բլջից մի այլ բլջի: Յերբ ուրիշ ընտանիքի մեղուններ վորևե պատճառով գալիս և տանում են այդ վարակված մեղրից, հիվանդությունը մուտք ե գործում և այդ ընտանիքների մեջ: Նույնը կարող ե տեղի ունենալ, յերբ վարակված մեղրը բաց ամաններով վաճառվում ե այս կամ այն տեղ, փողոցներում, պատահական ձևով և մեղունները հնարավորություն են ունենում նրանցից ոգտվել:

Մեղվապահության սովորական աշխատանքների ընթացքում, մանավանդ ամերիկյան փտախտի դեմ պայքար կազմակերպելիս, պետք ե անպայման նկատի ունենալ վե-

րոհիչյալ կեանքով մատնանշված միջոցառումները՝ պայքարի հաջողությունն ապահովելու համար:

Պայքարի կազմակերպումը.— Ամերիկյան փտախտը մի այնպիսի պատուհաս ե մեղվաբուծության զարգացման համար, վոր մեղվանոցներն այդ հիվանդությունից ազատելը վեր ե անհատ մեղվապահների ուժերից, և այդ մասնավորապես այն պատճառով, վոր մեր մեղվապահներից շատերը դեռ հիմնականում չեն տիրապետում մեղունների հետ աշխատելու ուրույն տեխնիկային, և չեն կարողանում անշեղորեն գործադրել այն բոլոր նախագգուշական միջոցները, կամ հաշվի առնել այն բոլոր նկատառումները, վորոնք հիմք են ծառայելու պայքարի հաջողության համար: Այդ բոլորի հետ մեկտեղ, ամերիկյան փտախտը մի այնպիսի հիվանդություն ե, վոր նրա դեմ մղվելիք պայքարը, յեթե չի տարվում կազմակերպված ձևով, յեթե չի տրվում նրան մասսայական բնույթ, ինչպես առհասարակ այդ անհրաժեշտ ե համաճարակների դեմ պայքարելու ժամանակ, հետագայում դժվար ե լինում: Յեթե մի մեղվապահ իր հիվանդ մեղունների մեկ մասը բուժման ե յենթարկում այսօր, մեկ ուրիշ մասը մի քանի օր հետո, իսկ հարևան մեղվապահը, վորը նույնպես ունի մեղունների հիվանդ ընտանիքներ, կամ բոլորովին աչքաթող ե անում, չի բուժում և կամ անում ե այդ շատ ուշ, յերբ արդեն այդ ընտանիքները բազմիցս անգամ հարձակման են յենթարկվել և նորանոր ընտանիքների վարակման պատճառ դարձել, նման անկազմակերպ միջոցառումներով վոչ մի դեպքում հիմնականորեն կամ առավելագույն չափով չի կարելի մեղվանոցներն ազատել ամերիկյան փտախտի արհավիրքներից, նրա հասցրած հսկայական վնասներից:

Փտախտի դեմ, մասնավորապես ամերիկյան փտախտի դեմ մղվելիք պայքարը պետք ե անպայման նախապես մասսայականացնել: Դրա համար նախապատրաստական աշխատանքները պետք ե սկսել հենց զարնանացանի աշ-

խատանքների հետ գուղընթաց: Վաղորդ պետք է մի տեղ համախմբել գյուղի կամ շրջանի բոլոր մեղվապահներին, կազմակերպել նրանց, բացատրական աշխատանք տանել նրանց մեջ, բրիգադների բաժանել այդ մարդկանց՝ փորձառու մեղվապահների գլխավորությամբ և անցնել հարվածային աշխատանքի, մասնակից դարձնելով տվյալ գյուղի կամ շրջանի ամբողջ ակտիվին:

Այդ աշխատանքի կազմակերպումը պետք է իրենց վրա վերցնեն մեղվաբուժական խորհրտեսուժությունները և առաջավոր կոլտնտեսային մեղվաբուժական ֆերմաները:

Պայքարի հաջողությունն ավելի ևս ապահովելու համար այստեղ ևս անհրաժեշտ է կիրառել աշխատանքի սոցիալիստական ձևերը՝ սոց-մրցումն ու հարվածայնությունը, նշանաբան ունենալով «վոչ մի հիվանդ ընտանիք մեղվա-նոցներում»:

Պետք է լիովին համոզված լինել, վոր առանց այդ նախապատրաստական աշխատանքների, առանց համախմբված և կոլեկտիվ աշխատանքի, վոչ մի կերպ չի կարելի հիմնական ու վճռական պայքար մղել փտախտի դեմ և ընդամիշտ ազատել մեղվանոցներն այդ հիվանդություններից:

Նախապատրաստական այդ աշխատանքները վերջացնելուց հետո, առաջին գործը պետք է լինի պարտավորեցնել մեղվապահներին, վորպեսզի նրանք, առանց բացառություն, մաքրեն, ախտահանեն և պատրաստ պահեն իրենց տրամադրության տակ յեղած բոլոր փեթակները և մեղվաբուժության վերաբերյալ այն բոլոր իրերը, վորոնք գործածված են, և, հարկ յեղած դեպքում, դարձյալ գործածվելու յեն:

Այն տեղերում, վորտեղ ամերիկյան փտախտը շատ է տարածված, անհրաժեշտ է նախապես մտածել հիվանդանոց-մեղվանոց կազմակերպելու մասին: Այդ գործի հաջող կազմակերպման համար ևս անհրաժեշտ է ընտրել ձեռն-

հաս և փորձառու մեղվապահներ, նախորդ վորոշել հիվանդանոց-մեղվանոցի տեղը, վորը պետք է լինի բոլոր մեղվանոցներից առնվազն յերեք կիլոմետր հեռավորության վրա և վորքան հեռու չինի, այնքան լավ: Հետո պատրաստի ունենալ նախապես ձեռք բերված անհրաժեշտ բոլոր պարագաները՝ մաքուր փեթակներ, մոմաթերթով շրջանակներ և այլն: Իր ժամանակին ստուգել բոլոր մեղվանոցները, հայտաբերել հիվանդ ընտանիքները, պարզել նրանց տեսակը, առանձին հաշվի առնել ամերիկյան փտախտով վարակվածների քանակը և, յերբ ամեն ինչ լրիվ կերպով պատրաստ է, վորոշված վայրը տեղափոխել բոլոր հիվանդ ընտանիքները և պայքարի հաջողության համար անհրաժեշտ բոլոր պարագաները: Իրանից հետո պատրաստ լինել հարմար ժամանակին հարվածային և վճռական աշխատանք կատարելու, հաստատ համոզված լինելով, վոր յեթե տվյալ շրջանում մեկ հատ հիվանդ ընտանիք մնա, այդ էլ բավական է վաղ կամ ուշ վարակելու ամբողջ շրջանը:

Մեզ մոտ փտախտի դեմ մինչև այժմ մղված պայքարը հիմնականում սպասված արդյունքը չի տալիս մասնավորապես նրա համար, վոր նախորդ պետք յեղած նախապատրաստական աշխատանքները կամ բոլորովին չեն տարվել կամ տարվում են խիստ անբավարար չափով: Յեվ, վոր ամենազխավորն է, փոխանակ նախորդ պատրաստելու պահանջված քանակությամբ մաքուր փեթակներ, շրջանակներ, մոմաթերթ և այլն, պայքարի ընթացքում են միայն մտածում այդ նյութերը ձեռք բերելու մասին: Իսկ այդ դանդաղեցնում է, և շատ դեպքում հիմնականորեն արգելք է հանդիսանում բուժման աշխատանքներին:

Այն տեղերում, վորտեղ հնարավորություն չկա հիվանդանոց-մեղվանոց կազմակերպելու, անհրաժեշտ է պայքարի գործը կազմակերպել հենց տեղում, միևնույն սկզբունքների հիման վրա:

Իհարկե, այդ ավելի մեծ կողմնությունն

11-24/1849



պահանջում, մասնավորապես հիվանդութեան տարածումն արգելելու տեսակետից:

Պայտաւի գործադրումը. — Ամերիկայան փտախտի դեմ մղվելիք պայքարի հիմնական նպատակն է՝ հիվանդ ընտանիքներից ամբողջութեամբ և հիմնովին վերացնել հիվանդութեան պատճառ հանդիսացող միկրոօրգանիզմը և վարակման վոչ մի աղբյուրը չթողնել մեղուների տրամադրութեան տակ: Իսկ պահանջում է պայքարի գործադրման ընթացքում լինել վերին աստիճանի զգուշ և արագ: Զգուշ պետք է լինել նրա համար, վոր մեղվանոցում նախ հարձակում առաջ չդա, և հետո վոչ մի վարակված նյութ, վեթակ, շրջանակ, չեչի, ակնամոմի կտորներ և այլն դեռ ուղեն չմտն կամ չթափվեն և նոր ընտանիքների վարակման աղբյուր հանդիսանան: Իսկ արագ պետք է գործել նրա համար, վոր հնարավորութեան սահմաններում նվազագույնի հասցվի նոր վարակումներ առաջացնելու բոլոր հավանականութեանները:

Պրոֆ. Ֆրիլպսը խորհուրդ է տալիս, վոր նախքան գործնական պայքարի անցնելը, այնքան մեղվանոցում կան ամերիկայան փտախտից թուլացած ընտանիքներ, ավելի լավ է այդպիսիները նախապես միացնել և հետո բուժման գործողութեանը կատարել, և կամ միացնել հենց այդ գործողութեան ժամանակ»:

Ամերիկայան փտախտի դեմ պայքարելու միակ և լավագույն միջոցը, վորն այժմ ամեն տեղ գործադրվում է, դա, այսպես կոչված, «թափ տալն» է: Այսինքն՝ հիվանդ ընտանիքի մեղուներն իրենց շրջանակներից և փեթակից ամբողջովին զրկել և տեղափոխել մոմաթերթով շրջանակներ ունեցող մաքուր փեթակի մեջ: Այդ ձևով միայն կարելի յե հիվանդ ընտանիքներից ամբողջութեամբ հեռացնել վարակված բոլոր նյութերը և ստիպել նրանց թե նոր չեչեր կառուցելու և թե թարմ պաշար հավաքելու: Յեթե գործողութեանը կատար-

վում է այնպիսի ժամանակ, վոր մեղուները հնարավորութեան չունեն թարմ պաշար հավաքելու—թեև այդպիսի ժամանակ առհասարակ խորհուրդ չի տրվում նման գործողութեան կատարել, — անհրաժեշտ է թափ տալուց առնվազն 48 ժամ հետո արհեստականորեն թանձր շաքարաջրով և կամ մաքուր, չվարակված մեղրով կերակրել տվյալ ընտանիքը:

Այն շրջաններում, վորտեղ մեղրաբերքն ուշ է սկսվում և նախքան այդ մեծ քանակութեամբ մեղուներ են տեղափոխում (քոչվորութեան վայրեր), որինակ՝ Ապարանի, Ախտայի և այլ շրջաններ, այդ տեղերում անհրաժեշտ է ամերիկայան փտախտով վարակված ընտանիքները թափ տալ նախքան մեղրաբերքն սկսվելը, կամ, ավելի ճիշտ, նախքան այնտեղ այլ մեղուներ տեղափոխելը, վորպեսզի այս վերջինները վարակման յեթարկվելու վտանգի առաջ կանգնած չլինեն: Այս դեպքում անհրաժեշտ է թափ տալու գործողութեանը կատարել յերեկոյան և թափ տրված ընտանիքները կերակրել թափ տալուց 48 ժամ հետո, ինչպես վերևում մտնանշված է:

Թափ տալու ժամանակը. — Յեթե արդեն հիվանդանոց մեղվանոց է կազմակերպված, թափ տալու գործողութեանը կարելի յե կատարել որվա ընթացքում այն ժամանակ, յերբ մեղուներն առատ բերք են բերում և տրամադրված չեն լինում հարձակումներ գործելու: Բացի այդ, թափ տալու մասսայական աշխատանքները պետք է առավելագույն չափով զուգակցել ուժեղ թափով մոմաթերթ գործելու ժամանակին: Նման հանգամանքներում՝ բավարար ուժ ունեցող թափ տրված ընտանիքը, շատ դեպքում, մի քանի որվա ընթացքում կարողանում է տրված բոլոր մոմաթերթերը լրիվ գործել:

Այն տեղերում, վորտեղ թափ տրվելիք միայն մի քանի ընտանիքներ կան, այդ գործողութեանը նույնպես կարելի յե կատարել նաև յերեկոյան, յերբ արդեն մեղուները մասսայական թուիչք չեն գործում:

Ամեն գեպքում նպատակ պետք է դնել միևնույն մեղվանոցում կատարվելիք թափ տալու գործողութունները, վորքան կարելի յե, կարճ ժամանակում կատարել և, յեթե հնարավոր ե, միևնույն օրը վերջացնել: Այդ կլինի լավագույն միջոցառումը հիվանդության հետագա տարածումն արգելելու համար: Զպետք է մեկ կամ յերկու փեթակ այսօր թափ տալ, մի քանիսք մի ուրիշ օր, և այսպես ձգձգելով՝ միշտ գործ ունենալ հիվանդության հետ: Այդ կարող ե ամենանպաստավոր պայմաններն ստեղծել հիվանդության տարածման համար և ազարդյուն դարձնել պայքարի ամբողջ աշխատանքը:

Գործողության նախապայտարարումը.—Նախքան թափ տալու գործողութունն սկսելը, յուրաքանչյուր թափ արբվելիք փեթակի համար անհրաժեշտ ե նախապես պատրաստի ունենալ մաքուր և համարված փեթակ, վորի շրջանակները վրա կպցված լինի 2—3 սմ լայնությամբ մոմաթերթ (կառուցողական շրջանակ): Մեզ մօտ, առհասարակ, ընդունված ե հենց սկզբից թափ տալ լրիվ մոմաթերթով շրջանակների վրա: Թեև այդ կարելի յե, բայց պրոֆ. Ֆիլիպսը գտնում ե, վոր թափ արբվելիք ընտանիքը միանգամից լրիվ մոմաթերթով շրջանակների վրա թափ տալն այնքան ել նպատակահարմար չե, յեթե մեղուները միայն մի անգամ են թափ արբում: Յեթե ցանկալի յե լրիվ մոմաթերթի վրա պատրաստված շրջանակներ ունենալ, նախապես արբված մոմաթերթի շերտով շրջանակները հետագայում (2—3 օր հետո) կարելի յե փոխել լրիվ մոմաթերթով շրջանակների հետ և կամ, վորոշ դեպքերում, միանգամայն դրական արդյունք ե տալիս, յեթե կրկին վարակվելու հնարավորություններ չլինեն:

Այստեղ հարց ե ծագում, թե ինչու համար անպայման մի շերտ կամ լրիվ մոմաթերթով շրջանակների վրա պետք ե թափ տալ, և վոչ թե, ասենք, դադարկ շեշերի

վրա: Պետք ե ասել, վոր հենց այստեղ ե գայանում թափ տալու գործողության հիմնական գաղտնիքը: Մի գաղտնիք, վորը շատ մեղվապահները համար դեռևս մնում ե մութ և դրա համար ել նրանք յերբեմն այնպիսի սխալներ են անում, վոր փոխանակ հիվանդությունը վերացնելու, ավելի շատ նրա տարածմանը պատճառ են դառնում:

Մենք զիտենք, վոր ամերիկյան փառատով վարակված ընտանիքի մեղրը նույնպես վարակված ե լինում այդ հիվանդությունն առաջացնող օրգանիզմով: Թափ տալու ժամանակ մեղուներն իրենց հետ են տանում այդ վարակված մեղրից վորոշ մաս: Յեթե մեղուները միանգամից թափ արբեն պատրաստի շեշերի վրա, մայրը հնարավորություն կունենա անմիջապես ձվարկում սկսելու. բացի այդ, մեղուներն իրենց հետ տարած վարակված մեղրը կլցնեն բլիշների մեջ, և յերբ այդ մեղրով կսկսեն վորդեր կերակրել, հիվանդությունը դարձյալ յերևան կգտ և կրտարածվի, նախ նույն փեթակի ընտանիքում և հետո մյուս ընտանիքներում:

Ուրեմն, պետք ե մեղուները թափ տալ այնպիսի փեթակի մեջ, վորտեղ վոչ միայն հնարավորություն չլինի մոր անմիջական ձվարկության համար, այլ և մեղուները հնարավորություն չունենան իրենց հետ տարած մեղրը տեղավորելու, լցնելու և ստիպված լինեն ամենակարճ ժամանակում—առառավելն 48 ժամվա ընթացքում—ողտագործել թե իրենց անդի համար, և թե նոր շեշեր կառուցելու համար, այնպես վոր մինչև նոր վորդերի խնամքն սկսելը, վարակված մեղրի վոչ մի հետք չմնա փեթակում:

Վո՞մանք հիվանդ ընտանիքներից վերցնում են բոլոր շրջանակները, տեղը դնում են դատարկ շրջանակներ և կամ թողնում առանց շրջանակների և մեղուն թափ են տալիս այդ նույն փեթակի մեջ, այնտեղ թողնում 48 ժամ, հետո նորից թափ տալիս, այս անգամ ախտահանված կամ բոլորովին չոգտագործված նոր փեթակի մեջ՝ լրիվ մոմաթերթով շրջանակների վրա:

Բացի ախտահանված կամ բուրբուրովին չողտադործված նոր փեթակից և մաքուր շրջանակներից, պետք է նույնպես պատրաստի ունենալ ամուր ծածկոցով և փակ արկանոցով մի այլ փեթակ՝ հիվանդ ընտանիքից վերցրած շրջանակներն անմիջապես նրա մեջ տեղավորելու և փակելու համար, վորպեսզի մեղուները նորից չկարողանան այդ շրջանակներից մեզը վերցնել: Այդ բուրբուրից դատ, նույնպես պետք է պատրաստ ունենալ քողը, ծխարարը, քերիչը և այլն:

Թափ տրված ընտանիքներն յերբեմն թողնում են փեթակը և փախչում: Վերջինս արգելելու և թափ տալու ժամանակ մտքը չվնասելու համար, անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ և մայրավանդակ. նախքան մեղուներ թափ տալը մտքն արգելափակել այդ վանդակում և դնել նոր փեթակի մեջ, վորտեղ մեղուները թափ են տրվելու: Մայրավանդակ չեղած դեպքում, նախ մտքը պետք է տանել և դնել նոր փեթակի մեջ և թափ տալուց հետո—յերբ արդեն մայրը նոր փեթակում է—արկանոցը ծածկել հանիմանյան ցանցով, վորի անցքերից մայրը (և բոսերը) չեն կարող անցնել, իսկ բանվոր մեղուները կարող են անցնել, բայց առանց մտք չեն թողնի փեթակը և փախուստ տա: Յերկու որ հետո, յեթե մայրն արգելափակված է, պետք է ազատ արձակել, իսկ յեթե արկանոցի դեմաց հանիմանյան ցանց է դրված, պետք է վերցնել:

Ինչպես պես և թափ սալ.—Վերոհիշյալ բուրբուր անհրաժեշտ պիտուրքները պատրաստելուց հետո, յեթե միանգամից մաքուր փեթակի մեջ է թափ տրվելու, գործողութունը պետք է կատարել հետևյալ ձևով:

Հիվանդ ընտանիքն իր փեթակով վերցնել տեղից, դնել մի կողմ և նրա տեղը մոխրով, հողով կամ կրով ծածկելուց հետո, դնել ախտահանված կամ բուրբուրովին չգործածված փեթակը՝ իր շրջանակներով: Այդ փեթակի մեջ պետք է դնել այնքան շրջանակ, վորքան թափ տրվելիք ընտանիքի

մեղուները կարող են ծածկել: Նրա արկանոցի առաջ պետք է փակել մի լայն թերթ թուղթ: Հետո զգուշութամբ բաց անել հիվանդ ընտանիքը, մի առ մի հանել շրջանակները և ուժեղ ցնցումով, բայց զգուշութամբ թափ տալ այդ թղթի վրա այնպես, վոր շրջանակի վրա յեղած բուրբ մեղուները թափվեն հենց արկանոցի մուտքի առաջ՝ վորպեսզի հեշտութամբ կարողանան մուտքը գտնել և ներս գնալ: Թափ տրված շրջանակներն անմիջապես պետք է տեղավորել այդ նպատակի համար նախապես պատրաստված՝ փակ արկանոցով փեթակի մեջ:

Բուրբ շրջանակները թափ տալուց հետո, յեթե փեթակում մեղուներ կան, նույնպես պետք է թափ տալ: Գործողութունը վերջացնելուց հետո արկանոցը պետք է անպայման փոքրացնել, իսկ փոված թուղթը վերցնել և այրել:

Իսկ հետո հիվանդոտ և վարակված բուրբ նյութերը պետք է հեռացնել մեղվանոցից և տանել այնպիսի մի տեղ, վոր մեղուները չկարողանան կամ հնարավորութուն չունենան նրանցից ոգտվելու:

Այն դեպքում, յերբ հիվանդ ընտանիքը, նախքան մաքուր փեթակի մեջ թափ տալը, թափ է տրվում իր փեթակի մեջ, թափ տալուց անմիջապես հետո լավ է նրան տալ կառուցողական շրջանակներ և 36—48 ժամ հետո փոխադրել նոր կամ մաքուր փեթակի մեջ, լրիվ մոմաթերթով շրջանակների վրա:

Յեթե նախքան թափ տալը կամ թափ տալու ժամանակ ընտանիքի մայրն արգելափակված է,—ինչ վոր պետք է անել վորպեսզի նա չվնասվի,—թափ տալուց յերկու որ հետո պետք է բաց թողնել, յեթե պիտանի մայր է, հակառակ դեպքում, այսինքն, յեթե անպետք, անվորակ մայր է, պետք է նրան սպանել և նրա տեղ տալ բեղմնավորված և լավ վորակի մայր:

Մեզ մոտ առհասարակ ընդունված է թափ տրված ընտանիքի մայրն սպանել, առանց նկատի առնելու նրա

վորակը: Դա, իհարկե, սխալ մոտեցում է: Յեթե ընտանիքի մայրը (խոսքը միայն ամերիկյան փթախտով վարակված ընտանիքի մոր մասին է) յերիտասարդ է և լավ փորակի, վոչ մի հիմք չկա նրան սպանելու:

Սխալ և անհիմն է կարծել, վոր ամերիկյան փտախտով կամ առհասարակ փտախտով վարակված ընտանիքի մոր ձվարանը վարակված կլինի այդ հիվանդությունով և նրա ածած ձվերը հենց այդ տեղից ել վարակված կլինեն: Այդպիսի յենթադրություններ, վորքան մեզ հայտնի յե, վոչ գիտականորեն և վոչ ել փորձնականորեն ապացուցված չեն: Թափ տալու ընթացքում մայրը կարող է այդ հիվանդությունն իր հետ տանել առառավելն այն չափով, վորքան նույն ընտանիքի մյուս մեղուները: Վորքան մեզ հայտնի յե, դեռ վոչ մի տեղ չի տեսնված, վոր մեղուները (և վոչ թե նրանց վորդերը) փտախտով վարակված լինեն, կամ փտախտի բացիլները նրանց, այսպես կոչված, արյան շրջանառության մեջ մտած լինեն, և կամ հիվանդությունը սերնդեսերունդ փոխանցվի մոր արյան կամ ձվարանի միջոցով:

Ընդհակառակը, դոկտոր Ոււյտի կողմից ասացուցված է, վոր փթախտի բացիլները վոչ միայն մեղուներին (վոչ թե վորդերին) չեն վնասում, այլ և չեն ել կարող նրանց մարմնի մեջ ապրել:

Պետք է դարձյալ հիշել, վոր ամերիկյան փտախտ առաջացնող Լարվի բացիլը միայն վորդերի մեջ է հիվանդությունն առաջացնում և վոչ թե հասակավոր մեղուների մեջ:

Ամերիկացի պրոֆ. Վիլսոնը հանձնարարում է հիվանդ շրջանակների վրայից մեղուները թափ տալու փոխարեն խոզանակով մաքրել և ամբողջ աշխատանքը վերջացնելուց հետո խոզանակն այրել: Այդ մի քիչ ավելի շատ ժամանակ է պահանջում, քան թե թափ տալը: Մեղվապահներից վոմանք շրջանակը չեն կարողանում այնպես թափ տալ,

վոր վրայի բոլոր մեղուները թափվեն: Նման մեղվապահների և սկսնակների համար գուցե ավելի ձեռնաուռ յե խոզանակ գործածելը, մանավանդ առատ բերքի ընթացքում: Խոզանակ չեղած դեպքում, կարելի յե խոտն ավելի նման ամուր կապել և գործածել:


Հիվանդ ընտանիքների համար գործածված խոզանակը կամ ավելը չի թուլատրվում առողջ ընտանիքների համար գործածել, այլ գործը վերջացնելուց հետո անպայման պետք է այրել:

Այնտեղ, վորտեղ հիվանդանոց-մեղվանոցներ են կազմակերպված և վորտեղ միանգամից մեծ թվով ընտանիքներ են թափ տրվում, գործողությունը վերջացնելուց հետո, հիվանդ վորդերով շրջանակները պետք է տեղավորել ամուր կորպուսների մեջ և մնացած յուրաքանչյուր հիվանդ ընտանիքի վրա դարսել 1—2 այդպիսի կորպուսներ, կազմել, այսպես կոչված, հիվանդանոց-փեթակներ, վորպեսզի առողջ և կնքված վորդերը դուրս գան և ընտանիքն աւժեղացնեն: Պետք է խստորեն հետևել այդ հիվանդանոց-փեթակներին, վորպեսզի հարձակման չենթարկվեն, վորովհետև փեթակն ընդարձակվում է և պաշպանությունը դժվարանում: Փեթակների և նրանց վրա դրված կորպուսների միջև վոչ մի բացվածք չպետք է մնա, վորտեղից մեղուները կարողանան դեպի դուրս անց ու դարձ կատարել: Անհրաժեշտ է, վորքան հնարավոր է, այդ ընտանիքների արկանոցները փոքրացնել:

10—12 որ հետո կազմակերպված հիվանդանոց-փեթակների ընտանիքներն ևս պետք է թափ տալ և մնացած բոլոր շրջանակներն ու փեթակները հեռացնել մեղվանոցից:

Թափ տրված ընտանիքները նույն տարվա համար պետք է համարվեն կասկածելի. յեթե նույն տարին հիվանդությունը դարձյալ չնկատվի նրանց մեջ, նոր միայն պետք է համարել առողջ ընտանիքներ:

Վարակված նյութերը մեղվանոցից հեռացնելուց և ապահով տեղ տանելուց հետո, լավ է, առանց տարվա վերջին սպասելու, ամենակարճ ժամանակում ձեռնարկել մաքրման և ախտահանման աշխատանքներին, մանավանդ յերբ մեծ բանակությամբ վարակված նյութ է կուտակվել: Փեթակների վրայից պետք է լավ քերել և մաքրել մոմն ու ակնամոմը. հետո յեռացրած մոխրաջրով այնպես լավ լվանալ, վոր նրա վրա մեղրի, մոմի կամ ակնամոմի վոշ մի հետք չմնա, և թողնել, վոր չորանա: Հետո պետք է պա-



Նկ. 4. Պայալնի լամպ՝ փեթակներ ախտահանելու համար:

փեթակներից 3—4 հատ իրար վրա այնպես դարսել, վոր նրանց արանքներում բաց տեղ չմնա և հետո ներսից կրակ տալ: Կրակը լավ բոցավառվելուց հետո մի ամուր կափարիչով ծածկել, վորպեսզի բոցը հանգչի:

Այս ձևի ախտահանումը վորոշ փորձառություն և զգուշություն է պահանջում, և պետք է գործադրել միայն այն դեպքում, յերբ հնարավոր չի լինում պայալնի

յալնի լամպով (Նկ. 4) փեթակի ամեն կողմը և յեղերքները լավ այրել մինչև խանձվելը, վորից հետո միայն հնարավոր կլինի դարձյալ գործածել: Նույն ձևով պետք է վարվել հատակների միջնատախտակների, և, յեթե կարիք է զգացվում, ծածկերի հետ:

Պայալնի լամպ չեղած դեպքում կարելի յե հատակներից անշատել փեթակները, ներսի կողմը նավթ քսել, այդ

լամպ ձեռք բերել: Այս ձևով հնարավոր չէ ախտահանել հատակները, միջնատախտակները և այլն:

Հիվանդոտ և վարակված շրջանակների վրա մեղր լինելու դեպքում պետք է առանձին քամել և չեչը հալել, մոմի վերածել, իսկ մեղրաքամ մեքենան պետք է մաքրել և ախտահանել, նախքան նրա մեջ մաքուր շրջանակներով մեղր քամելը:

Շրջանակները (ներանց վրայի չեչերը հալելուց հետո) կարելի յե նախ լավ մաքրել, հետո յեռացող ուժեղ մոխրաջրի կամ, ավելի լավ, սոդայի ջրի մեջ լվանալ և թողնել 5 րոպե. այդ ջրից դուրս հանելուց հետո յեռացող մաքուր ջրի մեջ դարձյալ պետք է թողնել 5 րոպե, վորից հետո հանել և չորացնել:

Պետք է ուշադրություն դարձնել, վոր այս ձևով մաքրված և ախտահանված շրջանակների վրա մոմի և ակնամոմի հետքեր չմնան, հակառակ դեպքում պետք է դարձյալ լվանալ և ախտահանել: Ախտահանման ամբողջ գործողության ընթացքում ջուրը պետք է միշտ յեռացած և մաքուր պահել:

Գոկտոր Վիլսոնը, վոր շրջանակների այս ձևով ախտահանումը հանձնարարողն է, գտնում է վոր մաքրելուց և ախտահանելուց հետո այդ շրջանակները, առանց կասկածանքի, կարելի յե դարձյալ գործածել:

Սմերիկյան փտախտով վարակված ընտանիքների շրջանակների վրայի շորերը (ծածկոցները), յեթե շատ նոր են, նախքան կրկին գործածելը, պետք է առնվազն մեկ ժամ յեռացնել, իսկ արդեն շատ գործածված և մաշված շորերն այրել:

Շրջանակների վրա յեղած բարձերը և տաքացման տոպրակները ևս պետք է ախտահանել (յեռացնել տոպրակները) կամ վառել:

Փեթակները, շրջանակները և մյուս բոլոր պարագաները կարելի յե ախտահանել և ախտահանման կամերայի

միջոցով, պայմանով, վոր կամերան լավ սարքին լինի և կարողանա թե շուրը յեռացնել և թե գորտչին լավ պահել:

Ամերիկյան փտախտով վարակված ընտանիքներից վերցված մեղրը պետք է շատ զգուշությամբ պահել և մեղունները չկերակրել այդ մեղրով: Անհրաժեշտութեան դեպքում պետք է նախ առնվազն հավասար քանակությամբ ջրի հետ խառնել, 40—50 բոպե յեռացնել և հետո միայն կերակրել: Յեթե այդ մեղրը մեղունների կերակրման համար չի գործադրվելու, պետք է առանձին պահել և վաճառել այն ժամանակ, յերբ մեղունները ձմեռանոցում են գտնվում: Վարակված մեղրը պատահական ձևով վաճառելը, յերբ մեղունները դրսում ազատ թռչում են, կարող է վարակման աղբյուր հանդիսանալ:

Յեռացրած մեղրը, վորպես ձմեռվա պաշար, չի կարելի մեղուններին տալ, վորովհետև այդ, ընդհանրապես, փորլուծություն է առաջացնում:

#### ԱՄԵՐԻԿՅԱՆ ՓՏԱԽՏԻ ԴԵՄ ՊԱՅԲԱՐԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ

Ամերիկյան փտախտով վարակված ընտանիքը լրիվ մոմաթերթով շրջանակների վրա թափ տալու դեպքում, մեղվապահներից վոմանք հանձնարարում են շրջանակներից մեկի տեղ դնել մի հին, բայց մաքուր չեչ, վորը հետագայում չի գործածվելու: Մեղունները թափ տրվելու ժամանակ իրենց տարած վարակված մեղրն անմիջապես տեղավորում են այդ չեչի մեջ: Թափ տալուց հետո 2-րդ ուրը, առավոտյան, շատ քիչ ծուխ տալով կամ առանց ծուխ տալու և առանց մեղուններին զգացնել տալու կամ անհանգստացնելու, պետք է բաց անել փեթակը, այդ չեչը շատ զգուշությամբ վերցնել և նրա տեղը դնել լրիվ մոմաթերթով շրջանակ: Յեթե մոռացութեան տրվի և հին չեչը ժամանակին փեթակից չվերցվի, թափ տալու ամբողջ աշխատանքն իզուր կանցնի և միառժամանակ հետո հիվանդությունը դարձյալ յերևան կգա: Բացի այդ, յեթե պետք յե-

ղած զգուշությունը չլինի, շրջանակը վերցնելու ժամանակ մեղունները դարձյալ կվերցնեն վարակված մեղրից և աշխատանքն իր նպատակին չի կարող ծառայել:

Նկատի առնելով այս դժվարությունները, վերոհիշյալ յեղանակի գործադրումը, ընդհանրապես, չենք հանձնարարում:

Վորպեսզի մեղունները թափ տալու ժամանակ իրենց հետ տարած մեղրն ամբողջությամբ գործածեն և վարակված մեղրի հետքը փեթակում բոլորովին չննա, մեղվապահներից մի քանիսը հանձնարարում են, ընտանիքները դատարկ կամ մոմաթերթով շրջանակներին վրա թափ տալուց հետո, փեթակը վերցնել տանել մի հով ու մութ տեղ և այնտեղ 48 ժամ պահելուց հետո դուրս բերել և դնել իր տեղը: Սա լավ միջոց է, յեթե ընտանիքների թիվը շատ քիչ է և հնարավորություն կա այդ անելու թե աշխատանքի, և թե տեղի տեսակետից: Յեթե փեթակի դրվելիք տեղը պետք յեղած չափով մութ չե, և, բացի այդ, շերմատիճանը 7—8-ից բարձր է, կարող է մեղունների անհանգստութեան և ընտանիքի փխաման պատճառ դառնալ: Լավ տեղ դրված ընտանիքը դուրս հանելուց հետո, փոխանակ մոմաթերթի, կարելի նույնիսկ նրան մաքուր չեչեր տալ, յեթե այդ անհրաժեշտ է և կամ մեղրաբերից ոգարվելու տեսակետից՝ ձեռնառու:

Մի շարք մեղվապահներ հանձնարարում են թափ տալու գործողությունը կատարել փակ վրանների տակ կամ փակ սենյակներում: Մեր կարծիքով դա վոչ միայն չի կարող առանձնապես ոժանդակել գործին, այլև, դուցե, կարող է վնասել, վորովհետև յեթե այդ գործողությունը ցերեկը կատարվի, մեղունները ցերիվ կզան վրանում կամ սենյակում և աշխատանքն այդ տեսակետից ավելի կդժվարանա: Յեթե թափ տրվելիք ընտանիքների թիվը քիչ է, այդ դեպքում, փոխանակ վրանի տակ կամ փակ սենյակում թափ տալու, կարելի յե յերեկոյան թափ տալ, իսկ



յեթե շատ են, ավելի լավ ե հեռացնել նրանց մեղվանոցից (ինչպես նախապես նկարագրված ե) և հետո թափ տալ:

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՊԱՅՔԱՐՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՓՏԱԽՏԻ ԴԵՄ

Յեթե ամերիկյան փտախտի դեմ իր ժամանակին մղված պայքարն անհրաժեշտ զգուշությամբ և հաջող կերպով չի տարված, և մեղվանոցում կամ նրա շրջակայքում յեղած բոլոր հիվանդ ընտանիքները միաժամանակ չեն բուժվել, հիվանդության դեպքեր են պատահում աշնանը, յերբ այլևս մեղունների համար հնարավոր չե ձմեռվա համար նոր պաշար հավաքել: Այս դեպքում, թեկուզ և ուշ, յերբեմն կարելի յե թափ տալ այդ հիվանդ ընտանիքները, պայմանով, վոր մեղրաբերը բոլորովին վերջացած լինի և մեղունները դադարած լինեն վորդ ու ձու խնամելուց: Այս պայմաններում ընտանիքը փոխանակ մոմաթերթով շրջանակների վրա թափ տալու, կարելի յե նախ թափ տալ փեթակի մեջ, և նրան տալ կամ մի քանի կառուցողական շրջանակներ և կամ մի քանի դատարկ չեչեր: Այդ վիճակում պահել 2—3 որ և նոր միայն թափ տալ մաքուր կամ նոր փեթակի մեջ, մաքուր և մեծ մասամբ մեղրով և ծաղկափոշով լցված շրջանակների վրա: Այդ շրջանակները (մեղրով և ծաղկափոշով) պետք ե անպայման վերցված լինեն առողջ ընտանիքներից: Թափ տրված ընտանիքին պետք ե տալ այնքան շրջանակ, վորքան մեղունները կարող են սպասել, և նրանց վրա պետք ե լինի առնվազն այնքան մեղր, վորքան անհրաժեշտ ե, վորպեսզի տվյալ ընտանիքը թե ձմեռվա ընթացքում և թե գարնանը, մինչև ոժանդակ մեղրաբերքի սկսվելը, մեղրապաշարով ապահովված լինի:

Յեթե վորեւե դեպքում հնարավոր չի լինի հիվանդ ընտանիքներն աշնանը թափ տալ, վոչ մի դեպքում չպետք ե նրանց թողնել դրսում՝ ձմեռելու համար, վորովհետև

նրանք կորոզ են ձմեռվա ընթացքում հանգչել, նախքան այդ ժամին մեղվապահի տեղեկանալը, մյուս ընտանիքները կարող են հարձակվել և տանել նրանց վարակված կերպաչարը, վորով և հիվանդությունը կտարածվի այս վերջինների մեջ: Այդ հիվանդ ընտանիքները պետք ե անպայման դնել ներսը՝ ձմեռելու համար, վորովհետև, յեթե նրանք նույնիսկ հանգչեն ձմեռանոցում, դա հիվանդության տարածման տեսակետից վտանգավոր չի կարող լինել, մյուս ընտանիքների կողմից հարձակման չի կարող յենթարկվել, միայն, թե յեթե մեկից ավելի թուլ և միևնույն ժամանակ հիվանդ ընտանիքներ կան, ավելի լավ ե նախ միացնել մեկը մյուսի հետ, կամ առնվազն յերկու առ յերկու տեղավորել մեկ փեթակի մեջ և հետո դնել ձմեռանոց, վորպեսզի նրանք կարողանան ավելի հեշտությամբ և քիչ կորստով անցկացնել ձմեռը:

Դեռևս կան մեղվապահներ, վորոնք հանձնարարում են մեղրի կամ շաքարաջրի հետ զանազան դեղեր խառնել և կերակրել հիվանդ ընտանիքի մեղուններին, կամ թե ծուխ տալ նրանց: Ինչպես նախապես ասել ենք, ամերիկյան փտախտի համար նախապես պետք զեղեքը վոչ մի արժեք չեն ներկայացնում յեվ ժամանակ չպետք ե վասնել նրանց գործածության համար:

Ամերիկյան փտախտի բուժման մասին խոսելիս, հասկանալի յե, վոր մենք նկատի ունենք միայն շարժուն շրջանակներով փեթակները և վոչ թե քթոցներ կամ անշաքժ շրջանակներով արկղները: Այս վերջինները հանդիսացել են մեղվաբուժության մինչ այժմյան հետամնացության և հիվանդությունների տարածման գլխավոր պատճառները: Դժբախտաբար, Հայաստանի մի շարք շրջաններում, դեռևս վորոշ չափերով գործածության մեջ են նման փեթակներ: Վերջիններս ավելի մեծ դժվարություններ են առաջացնում մանավանդ այն շրջաններում, վորտեղ փտախտի տեսակներն ավելի շատ են տարածված: Այդ փեթակների մեջ

դժվար, համարյա անհնարին և լրիվ ստուգել ընտանիքի առողջութունը և, հիվանդութուն յերևան բերելու դեպքում, պայքարի ձևեր գործադրելը:

Այն ընտանիքները, վորոնք տեղավորված են քթոցների կամ անշարժ շրջանակներ ունեցող արկղերի մեջ և վարակված են փտախտով, անհրաժեշտ և այդպիսի ընտանիքները նախ փոխադրել մաքուր արկղի մեջ, այնտեղ պահել առնվազն 2 օր և հետո փոխադրել շրջանակավոր փեթակների մեջ:

ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՏԱԽՏ

Յեվրոպական փտախտը, վորը մեզ մոտ կոչվում է նաև «բաց վորդի փտախտ», տարածված է համարյա թե մեղվաբուծական բոլոր շրջաններում: Սա նույնքան ավելի փտանգավոր և վնասակար հիվանդութունն է, վորքան ամերիկյան փտախտը: Յեվրոպական փտախտը նպաստավոր պայմաններում շատ ավելի արագ է տարածվում թե փեթակի ներսում, և թե մեղվանոցում, վորով և շատ ավելի արագ է փչացնում ընտանիքներն ու քայքայում ամբողջ մեղվանոցը, քան թե այդ անում է ամերիկյան փտախտը:


Պարզ և ուրեմն, վոր այս դեպքում ևս շատ անհրաժեշտ է վաղորոք հայտարարել մեղվանոցներում յեվրոպական փտախտի գոյութունը և համապատասխան միջոցների գիմել նրա տարածումն արգելելու, նրա դեմ պայքար կազմակերպելու համար:

Յեվրոպական փտախտը լավ ճանաչելու և նրան ամերիկյան փտախտից տարբերելու համար, անհրաժեշտ է նույնպես լավ ճանաչել նրա ախտանշանները և ուշի ուշով հետևել այդ հիվանդության, վորովհետև այդ ախտանշանները թե շատ են, և թե փոփոխական:

Նկատի ունենալով այդ կարևոր հանգամանքը, ստո-

րև տալիս ենք յեվրոպական փտախտի բոլոր ախտանիշները (նկ. 5, 6):



Մեղվի վորդը յեվրոպական փտախտով վարակվում է առհասարակ իր կյանքի զարգացման սկզբնական շրջաններում, յերբ նա դեռ բլջի հատակումն է և հազիվ 3—4 օրվա կյանք ունի: Վորդը սովորաբար մահանում է նախ-



Նկ. 5. Յեվրոպական փտախտի տարբեր ախտանիշները. ա՝ վորդի մնացորդը, բ՝ նոր վարակված վորդ, գ, դ, զ, ե, ը՝ վարակված վորդը տարբեր դիրքերում, ճ՝ ավելի շուտ մահացած վորդից մնացած թեփուկը, շնչափողերը յերկվում են:

քան բլջի կնքված (սերեկված) լինելը, վորի համար և կոչվում է «բաց վորդի փտախտ», իսկ հազվագյուտ դեպքերում միայն այս ձևի փտախտից վորդերը մահանում են բլջի կնքվելուց հետո: Այդ դեպքում բլջիջների սերեկները, ընդհանրապես, լինում են ցած ընկած ու ծակոտկեն, ինչպես

այդ ընդհանրապես և ավելի շատ պատահում է այն դեպքերում, յերբ վորդն ամերիկյան փտախտից բՂիջներում մահացած է լինում: Յեթե մեղվապահը պետք լեղած չափով և հիմնականում լավ չի ձանաչում այդ հիվանդության բոլոր ախտանշանները, նա ավելի ևս կշփոթվի



և կգժվարանա փտախտի այդ յերկու ձևերը մեկը մյուսից տարբերել:

Յեվրոպական փրտախտով վարակված վորդն սկզբնական շրջանում կորցնում է իր կլոր ձևը և թնական գույնը, դառնում է բաց դեղնագույն, վորոշ չափով թափանցիկ, բՂջի ներսում կատարում է անհանդիստ շարժումներ, և

Նկ. 6. Յեվրոպական փտախտի տարբեր ախտանշանները—ա, բ, գ՝ մահացած վորդը տարբեր դեղքերում, դ, յե՝ թեփուկը: (ա, բ, գ՝ դ, յե՝ բՂջի յերկարությամբ՝ կողքից դիտված):

ուշադիր դիտելու դեպքում՝ նկատելի յե լինում շնչափողերը և վորդի ողակավորված կերպարանքը (նկ. 5— յե, բ):

Վարակված վորդը յերբեմն բՂջի հատակին տափափացած մնում է, կամ ստանում է կիսաշրջանակաձև դիրք՝ յերկու ծայրերը դեպի բՂջի հատակը, իսկ կոնակը դեպի դուրս ձգված, և կամ ստանում է բոլորովին տարբեր՝ պատահական դիրք (բՂջի կողքերին, հատակին և նույնիսկ վերի մասում): Սրան հակառակ՝ ամերիկյան փտախտով վարակված վորդը միշտ ել ընկած է լինում բՂջի ցածր կողքին:

Յերբ փտումն ավելի յե սաստկանում, վորդն ստանում է ավելի մուգ-դեղին կամ գորշագույն տեսք և կորցնում իր թափանցիկութունը: Բայց հիվանդության սկզբնական շրջանում յեղած վորդի դեղին գույնը կարծես ավելի յերկար ժամանակ է մնում, քան թե հետագա գույները, վորովհետև յերբ արդեն հիվանդությունը տարածված է լինում, բացի հիվանդության իսկական բացիլներից, ուրիշ տեսակի բացիլներ ևս մուտք են գործում փտող վորդի մեջ և նրան տալիս տարբեր և փոփոխական գույն: Սակայն և այնպես դեղին գույնը յեվրոպական փտախտի դիտավոր աշխատանքներից մեկը կարելի յե համարել:

Սովորական այն մածուցիկությունը, վոր շատ ցայտուն կերպով կարելի յե նկատել ամերիկյան փտախտից մահացած վորդի մեջ՝ նախ քան նրա չորանալը և թեփուկի վերածվելը, յեվրոպական փտախտից մահացած վորդի մեջ չի նկատվում: Կամ յեթե նույնիսկ պատահում է մածուցիկություն, այդ լինում է շատ թեթև և ավելի շատ նմանում է իր առաձգականությունը կորցրած ուղիների ձգվելուն: Նա չի ձգվում այնպես թելանման ու յերկար, ինչպես ամերիկյան փտախտից մահացած վորդն է ձգվում:

Յեվրոպական փտախտն առհասարակ շատ թույլ հոտ ունի: Յերբեմն զգացվում է թթու հոտ, վոր հիվանդության վորոշ շրջանում կայուն է, և վորի համար շատ հաճախ «թթու վորդ» անունն են տալիս, կարծելով՝ վոր դա առանձին հիվանդություն է: Ինչպես վերևում ասված է

գույնի վերաբերյալ, նույնը պետք է ասել և յեվրոպական փտախտի հոտի մասին: Դա այն է, վոր, վորդը յեվրոպական փտախտով մահանալուց հետո, այլ որգանիզմներ մուտք են գործում նրա մեջ և հաճախ առաջացնում են թթու հոտ: Շատ դեպքերում թթու հոտ բոլորովին չի լինում, կամ յեթե լինում է, շատ վաղանցուկ է լինում և յուրահատուկ չէ յեվրոպական փտախտի համար:

Ըստ պրոֆ. Ֆիլիպսի, յեվրոպական փտախտի ամենակարևոր ախտանիշը պիտի համարել այն, վոր նա հավասարապես վարակում է թե բանվոր, թե բուռացու, և թե մայրացու վորդերին: Բացի այդ, վարակված ընտանիքները շատ հաճախ աշխատում են իրենց մայրը փոխել, բայց մայրապտուկի մեջ յեղած վորդը մահանում է, ընտանիքը մնում է բոլորովին անմայր և արագորեն թուլանում:

Վերոյիշյալ բոլոր ախտանիշներին ուշադրությամբ հետեւելուց հետո, մեղվապահի համար շատ հեշտ կլինի տարբերել յեվրոպական փտախտն ամերիկյան փտախտից, և, ինչպես նախապես շեշտված է, դա նախապայմանն է կազմակերպելիք պայքարի հաջողությունն ապահովելու տեսակետից:

Այն շրջաններում, վորտեղ յեվրոպական փտախտը գոյություն ունի, առհասարակ ավելի շատ ընտանիքներ են վարակված լինում, քան թե այնտեղ, վորտեղ միայն ամերիկյան փտախտ է տարածված: Բայց և այնպես, յեթե յեվրոպական փտախտով վարակված ընտանիքին ժամանակին անհրաժեշտ խնամք տարվի և հիվանդությունը շատ լայն ծավալ չստանա փեթակի ներսում, նրանցից շատերը կվերականգնեն իրենց ուժը և կազատվեն փչացումից: Իսկ յեթե այդ ընտանիքները չեն խնամվել ինչպես վոր պետք է և շատ են թուլացել, նրանք, առհասարակ, յենթակա յեն փչացումի՝ մանավանդ ձմեռվա ընթացքում:

Յեվրոպական փտախտի դեմ հաջող կերպով պայքարելու համար պետք է, նախ՝ նկատի ունենալ հետևյալը.

1. Յեվրոպական փտախտը թույլ ընտանիքների հատուկ հիվանդություն է:

Այս հիվանդությունը թեև յերբեմն նկատվու է նույնպես և ուժեղ ընտանիքների մեջ, բայց և այնպես այս վերջինները շատ դեպքում հեշտությամբ կարողանում են դիմադրել նրան և չեն թողնում, վոր մեծ վնաս հասցնի ընտանիքին:

Այստեղ պետք է մատնանշել, վոր այն ընտանիքները, վորոնք զարնան ընթացքում հնարավորություն չունեն և չեն կարողանում արագորեն զարգանալ, ավելի շատ են վնասվում յեվրոպական փտախտից, քան թե նրանք, վորոնք կարողանում են ավելի արագ զարգանալ: Փոքր ընտանիքները և վոչ թե թույլ ընտանիքները, յեթե պաշարով ապահովված են, ունեն յերիտասարդ և լավորակ մայր, մեծ քանակությամբ յերիտասարդ կենսունակ մեղուներ, ավելի արագ են զարգանում և շատ հաճախ կարողանում են դիմադրել յեվրոպական փտախտին: Իսկ վերոյիշյալ հնարավորություններից զուրկ և թույլ ընտանիքները գրեթե միշտ ուժեղ կերպով վնասվում են և, անուշադրության մատնվելու դեպքում՝ փչանում այդ հիվանդությունից: Պրոֆ. Ֆիլիպսը շատ իրավացիորեն ասում է, վոր «յեվրոպական փտախտը վոչ թե փոքր, այլ թույլ ընտանիքների հիվանդություն է»:

Այստեղ շատ տեղին է հիշեցնել մեր մեղվապահներին, վոր փոքր և կենսունակ ընտանիքները, յեթե պետք յեղած խնամքն ու հոգատարությունը չեն ստանում և նորմալ կերպով չեն զարգանում, կարճ ժամանակում թուլանում են և ավելի շատ են վնասվում:

2. Յեվրոպական փտախտն ավելի շատ է տարածված լինում գարնանը և ամառվա սկզբներին. յերբեմն նկատվում է և ամռան ու աշնան ամիսներին, բայց այդ ավե-

լի բացառութիւնն եւ, քան թէ սովորական յերևույթ, և պատահում ե ծայրահեղորեն անուշադրութեան մատնված թույլ ընտանիքներում:

Յեվրոպական փտախտն առհասարակ սկսում ե զարգանալ և տարածվել մայիս ամսվա ընթացքում և ամենաշատը տարածված ե լինում հունիսի կեսերին, նայած կլիմայական պայմաններին և մեղրաբերքի ընթացքին, հետո աստիճանաբար սկսում ե նվազել, յերբ սկսվում ե մեղրաբերքը և անհետանում ե ամառվա վերջերին՝ մեղրաբերքի հետ զուգընթաց, յեթե հիվանդութիւնը թեթև ընույթ ե կրում, ընտանիքը շատ չի թուլացել և իվիճակի յե յեղել այդ ժամանակամիջոցում փշացած վորդերը մաքրել, հեռացնել փեթակից: Այն ընտանիքները, վորոնք ի վիճակի չեն այդ բանն անելու՝ նույնիսկ նման նպատակովոր պայմաններում, և յեթե հոգ չի տարվում մեղվապահի կողմից, նրանք մահանում են բերքի սակավութեան դեպքում կամ ձմեռվա ընթացքում:

3. Այն շրջաններում, վորտեղ մեղրաբերքն ուշ ե սկսում կամ կայուն բերք չկա, և կամ առհասարակ բերք չի յեղել, մեղուններն ապահովված չեն կերպազաշարով, այդ շրջաններում յեվրոպական փտախտը հսկայական վնասներ կարող ե հասցնել բերքի բացակայութեան դեպքում հիվանդութիւնն անսպասելի արագութեամբ տարածվում ե շրջանի ամբողջ մեղվանոցներում: Ընդհակառակը, այն շրջաններում, վորտեղ մեղրաբերքն ավելի շուտ ե սկսվում և կամ ուժեղ ոժանդակ բերք կա, հազվագյուտ դեպքերում միայն կարելի յե նկատել յեվրոպական փտախտը, վորովհետև ընտանիքը հնարավորութիւն ունի ուժեղ կերպով զարգանալու, իսկ ուժեղ ընտանիքներում յեվրոպական փտախտը զարգանալու հնարավորութիւնն չունի:

4. Տվյալ տարվա վորդի առաջին զանգվածը, համեմատաբար, շատ քիչ կորուստ ե տալիս: Հավանականորեն դրա պատճառն այն ե, վոր ընտանիքներից վոմանք իրենց

թուլութեան կամ բերքի սակավութեան պատճառով վերջին ամսվա ընթացքում իվիճակի չեն յեղել լրիվ կերպով մաքրել և վերացնել վարակված ամբողջ նյութը և նրանից մի փոքր մասը մնացել ե փեթակներում:

Պարզ ե ուրեմն, վոր չպետք ե բավարարվել ընտանիքների առաջին ստուգումով և աւել, վոր հիվանդութիւնն չկա, այլ պետք ե հաճախակի ստուգել բոլոր ընտանիքները՝ հիվանդութեան դեպքերը հայտաբերելու համար:

5. Մեղվապահների յերկարամյա փորձերը ցույց են տրվել, վոր մեղունների ընտանիքներից վոմանք ավելի հաշտութեամբ են դիմադրում յեվրոպական փտախտին, քան թե մյուսները: Նույն տարբերութիւնը նկատված ե նաև մեղունների տարբեր տեսակների և ցեղերի մեջ:

Որինակ, ամերիկյան մեղվապահները գտնում են, վոր իտալական ցեղի յերեք գծանի (դեղին) մեղունները շատ հաշտ կերպով դիմադրում են յեվրոպական փտախտին և նրանք մեղվաբուժական բոլոր աշխատանքներում ավելի շատ արդյունք են տալիս, քան թե մյուսները:

Վորքան ել ճիշտ լինի այդ, վոչ մի դեպքում չի նշանակում, վոր մեղունների այլ ցեղեր կամ տեսակներ նման լավ արդյունք չեն կարող տալ: Շատ հավանական ե, վոր կովկասյան մեղունների մեջ նման, գուցե և ավելի լավ, հատկութիւններ ունեցող մեղունների տեսակներ կան: Իրժբախտութիւնը միայն այն ե, վոր մինչև այժմ մեղ մոտ այդ ուղղութեամբ վորեւե աշխատանք չի տարվել:

6. Բոլոր մեղվապահներին ել հայտնի յե, վոր յեվրոպական փտախտը ևս վարակիչ հիվանդութիւնն ե: Այդ հիվանդութիւնն առաջանում ե Պլուտոնի բացիլ (bacillus Pluton) կոչված միկրոօրգանիզմների միջոցով: Դրանք այնպիսի բացիլներ են, վորոնք վոչ ամերիկյան փտախտի մեջ են նկատվում, վոչ ել տոպրակաձև փտախտի մեջ, ինչպես վերջինների բացիլները չեն նկատվում յեվրոպական փտախտի մեջ: Պլուտոնի բացիլը շատ վորոշ կերպով

արբերվում է ամերիկյան փտախտ առաջացնող Լարվիի բացիլից: Փտախտի ձևերի տարբերութան մեջ այդ ամենաեյական կետերից մեկն է, վոր պետք է նկատի ունենալ և, ինչպես նախապես մատնանշված է, յերբեք չկարծել վոր յեվրոպական փտախտ առաջացնող որգանիզմը կարող է յեվամերիկյան փտախտ առաջացնել կամ, ընդհակառակը, ամերիկյան փտախտ առաջացնողը՝ յեվրոպական փտախտ յեվս առաջացնել: Այդպիսի կարծիքը հիմնովին սխալ կլինի:

Իրա հետ մեկտեղ՝ նույնպես պետք է իմանալ, վոր շատ ավելի հեշտ է պայքարել յեվրոպական փտախտ առաջացնող որգանիզմի դեմ, քան թե ամերիկյան փտախտ առաջացնող որգանիզմի դեմ:

Պլուտոնի բացիլը, ըստ Ոււայտի տվյալների, սպոր չի կաղվում, 79° Յել. տաք մեղրի մեջ կարող է միայն 10 րոպե դիմանալ, արևի տակ՝ 3—4 շաբաթ, ջրի մեջ և արևի տակ՝ 5—7 ժամ, մեղրի մեջ և արևի տակ՝ 3 ժամ, մեղրի մեջ սովորական պայմաններում՝ 3—7 ամիս, ծաղկափողու մեջ՝ 7—10 ամիս և մեկ տոկոս կարբոլյան թթվի մեջ՝ 5 ժամ:

7. Յեվրոպական փտախտից մահացած վորդն իր փրսուսի ընթացում կամ փսումից հետո (թեփուկը) չի կրպչում բջի պատերիմ, ինչպես ամերիկյան փտախտիը և նպաստավոր պայմաններում մեղուները հետևաբար կարողանում են մահել բջիջներից յեվ հեռացնել փեթակից վորդի այդ մնացորդները: Այս առնչությամբ պրոֆ. Ֆիլիպսն ասում է, վոր «յերթ մեղվի ընտանիքն ուժեղ է յեվ ընտանիքի ներսում անհրաժեշտ նպաստավոր պայմանները կան, վորպեսզի մեղուները կարողանան դիմադրել այդ հիվանդությանը, նրանք կարողանում են այնքան լավ մահել բջիջները, վոր հետագայում նույն բջիջների մեջ խնամված վորդերը չեն վարակվի այդ հիվանդությամբ»:

8. Թե հիվանդությունն ինչ ձևերով կամ ճանա-

պարհներով է տարածվում, հիմնականում լավ պարզված չէ, թեև կան տվյալներ, վոր այդ կատարվում է դայակ (կերակրող) մեղուների միջոցով: Նույնպես նկատված է, վոր վորոշ հանգամանքներում հիվանդությունն իսկապես փոխանցվում է կերակրելու ժամանակ:

Փորձերը ցույց են տվել, վոր բոլոր դեպքերում էլ յեվրոպական փտախտով վարակված մեղրն այդ հիվանդության փոխանցման սովորական միջոցը չի հանդիսանում, ինչպես այդ հանդիսանում է ամերիկյան փրսախտի դեպքում: Ֆիլիպսի ասելով՝ «հայցնի իրողությունն է, վոր վարակված ընտանիքից (յեվրոպական փտախտով Վ. Դ.) մեղր կարելի է սալ առողջ ընտանիքներին ցաս ապահով կերպով, պայմանով, վոր այդ առողջ ընտանիքները լինեն այնպիսի նպաստավոր պայմաններում, վոր կարողանան այդ հիվանդության դիմադրել»: Նա նույնպես ավելացնում է, թե «յեվրոպական փտախտով վարակված ընտանիքների մեղրն անհրաժեշտ չէ փտախտանել (յեռացնել), ինչպես այդ անհրաժեշտ է ամերիկյան փտախտով վարակված ընտանիքներից վերցրած մեղրի համար»: Այդ հիման վրա էլ, ըստ Ֆիլիպսի, անհրաժեշտ չի համարվում ախտահանել յեվրոպական փտախտով վարակված ընտանիքների փեթակները, չեչերը և շրջանակները:

Վերոյիշյալ (7—8 կետեր) խնդիրները մեղ մոտ դեռևս փորձված ու հաստատված չեն և կարելի չէ միայն վերապահությամբ ընդունել, միայն թե այստեղ պետք է շեշտել, վոր Պլուտոնի բացիլով վարակված իրերը դուրս առանձնապես վնաս չեն կարող պատճառել այն դեպքում, յերբ ընտանիքն ուժեղ է, և յեթե նույնիսկ այդ վարակված մատերիալներից հիվանդությունն առաջանա, ուժեղ ընտանիքը կարող է առանց դժվարության մաքրել բջիջները մահացած վորդերի մնացորդներից: Իսկ յեթե այդ վարակված մատերիալները տրվեն թույլ և անկենսունակ ընտա-

նիքները, այս վերջինները, անտարակույս, կվարակվեն և լուրջ կերպով կվնասվեն, մանավանդ այն դեպքում, յերբ այդ վարակված նյութերը գործադրվեն անմիջապես:

9. Ինչքան ել յեվրոպական փտախտն արագ կերպով է տարածվում, այնուամենայնիվ ամերիկյան փտախտի չափ վնասատու չի թվում, վորովհետև շատ ընտանիքներ թեև վարակման յենթակա յեն լինում, բայց և այնպես չեն վարակվում, կամ վարակվում են աննկատելի կերպով և հետո ինքնաբերաբար առողջանում: Այդ հանգամանքը կարող են հաստատել մեր մեղվապահներից շատ շատերը:

Ինչպես կանխել յեվրոպական փտախտի տարածումը: Վոչ վոր չի ժխտի այն ճշմարտությունը, վոր ավելի հեշտ յեվ ավելի ձեռնու յե վորեվե հիվանդություն արգելելու համար անհրաժեշտ պրաքիլակսիկ միջոցառումներ գործադրել, քան թե հիվանդությունը վորեվե տեղ հայտարարվելուց հետո նրա դեմ պայքարել: Նույնը պե՛տ է ասել յեվ փտախտի վերաբերյալ:

Ահա մի հանգամանք, վոր պետք է անպայման նկատի ունենան մեղվաբուծությամբ զբաղվող բոլոր կազմակերպությունները և անհատ մեղվապահները, վորոնք աշխատանքի լավագույն օրինակներ պետք է տան իրենց ճիշտ աշխատանքով և կազմակերպվածությամբ:

Ամերիկյան փտախտի մասին խոսելիս մատնանշեցինք, վոր այդ հիվանդությունն անխտիր վարակում է մեղուների բոլոր ցեղերը և տեսակներն ու հավասարապես վնասում նրանց: Այդ այնքան ել ճիշտ չի լինի ասել յեվրոպական փտախտի վերաբերյալ: Մենք տեսանք, վոր մեղվանոցը յեվրոպական փտախտից ազատելու գործում խոշոր նշանակություն ունի պահել այնպիսի մեղուների ընտանիքներ, վորոնք դիմադրում են այդ հիվանդությանը:

Հակառակ դեպքում, յերբ նա մուտք է գործում մեղվանոցը, դժվար է նրանից ազատվել: Իսկ այդպիսի ընտանիքներ հայտարարելու համար, անհրաժեշտ է միայն հե-

տեղ, ուսումնասիրել ամբողջ մեղվանոցի ընտանիքները և այդ լավագույն ընտանիքներից մայրեր ստանալ ու տալ մյուս ընտանիքներին, վորովհետև մայրը՝ յեթե իսկապես լավ վորակի, առողջ, յերիտասարդ և պտղառատ է, ընտանիքի հաջողության, նրա արդյունավետության առանցքն է կազմում: Առանց այդպիսի մոր, ընտանիքը վոչ մի դեպքում իվիճակի չի լինի վոչ միայն դիմադրել յեվրոպական փտախտին, այլև շոշափելի արդյունք տալ բերքի տեսակետից:

Դժբախտաբար մեր մի քան մեղվապահներ չեն կարողանում ըմբռնել այս հանգամանք. փոխանակ անհրաժեշտ միջոցառումներ գործադրելու, պե՛տ յեղած ինամբ յեվ ուժադրություն դարձնելու, վորպեսզի իրենց ինամբին հանձնված ընտանիքները ժամանակին ուժեղանան, քան անգամ իրենք արհեստականորեն պատճառ են դառնում ընտանիքի թուլացմանը:

Յեթե մենք ընդունենք,—և չընդունելու վոչ մի պատճառ չունենք,—վոր «յեվրոպական փտախտը մեղուների թույլ ընտանիքների հիվանդություն է», ուրեմն պարզ է, վոր մենք այդ հիվանդության դեմ պայքարելու համար նախ պե՛տ է պայքարենք թույլ ընտանիքներ պահելու պրակսիկայի դեմ, անորակ, քարիճով կամ պատահական ընտանիքներից վերցված մայրեր պահելու պրակսիկայի դեմ, լավ կամ վաս հասկություններ ունեցող ընտանիքի մեջ քարբերություն չղնելու յեվ վաս հասկություններ ունեցող ընտանիքներից յեվս նոր սերունդներ առաջացնելու պրակսիկայի դեմ:

Այստեղ նույնպես նկատի պետք է ունենալ, վոր յեվրոպական փտախտն ավելի շատ յերեան է գալիս և տարածվում է գարնանը և ամառվա սկզբներին, այդ նշանակում է, վոր ընտանիքները վոչ միայն ընդհանրապես պետք է ուժեղ պահել, այլև ուժեղ պետք է պահել հենց գարնանից, հնարավորություն տալ նրանց առավելագույն չափով դարգա-

նայու և գլխավոր մեղրաբերքի նախորդակին իրենց ուժի մաքսիմալ չափին հասնելու: Այդ ամենահիմնական նախապայմանն է մեղուների արդյունավետութունն ապահովելու համար: Յե՛վ այդ է պատճառը, վոր շատ հաճախ միևնույն տեղում մեղուներ պահող մեղվապահներից վոմանք, վորոնք իսկապես ուժեղ ընտանիքներ են պահում, կրկնապատիկ, յեռապատիկ ավելի մեղր են ստանում իրենց մեղուներից, քան թե նրանք, վորոնք պահում են թույլ ընտանիքներ:

Մեղվապահներից վոմանք շատ իրավացիորեն հարց են տալու, թե՛ ի՞նչ պետք է հասկանալ «ուժեղ ընտանիք ասելով, թե՛ արդյո՞ք կարելի յե ուժեղ ընտանիքի վորոշ չափանիշ կամ ստանդարտ ընդունել, վորովհետև մի մեղվապահ մի ընտանիքը համարում է ուժեղ, այն ինչ մի այլ մեղվապահ նույն ընտանիքը համարում է թույլ: Ըստ Ֆիլիպսի «ուժեղ կարելի յե համարել այն ընտանիքը, վորը մեղրաբերքի նախորդակին ունի առնվազն 5000 քաղցանակ (կանկարսնի) լիքը վորդ», այսինքն՝ վոշ թե պետք է հաշվել, թե քանի շրջանակի վրա վորդ կա, այլ թե՛ յեղած ամբողջ վորդերը միասին քանի լիքը շրջանակ վորդ կկազմեն:

Վորպեսզի այս կետը մեր մեղվապահներին հասկանալի լինի, այստեղ անհրաժեշտ է մատնանշել, վոր Հ. Ա. Մ. Նահանգներում, վորտեղ ամենից շատ են տարածված կանկարսնաբեր ձևի փեթակները, մեղուների նորմալ մի ընտանիք վորպես բուն զբաղեցնում է վոշ թե մի փեթակ, այլ նրա հետ մեկտեղ յերբեմն յերկու կամ ավելի կորպուս, վորով ընտանիքը փոխանակ 10-ը շրջանակի վրա լինելու, լինում է առնվազն 20 և յերբեմն 30-ից ավելի շրջանակի վրա: Ինչ խոսք, վոր այդքան շրջանակներ զբաղեցնող ընտանիքը հնարավորութուն կունենա 10-ը և ավելի լիքը շրջանակ վորդ ունենալ:

Այստեղ պետք է մատնանշել, վոր շեշտը դրված է

նորմալ ընտանիքների վրա, վորոնցից սպասվում է առավելագույն չափով ոգտադործել մեղրաբերքը՝ մեղր կուտակելու համար, և վոշ թե վորպես ձագ նոր վերցված ընտանիքների վրա, վորոնք լավագույն դեպքում միայն կարողանում են մեղրաբերքն ոգտադործել իրենց զարգացման և բավարար քանակութամբ պաշարի կուտակման համար:

Մեր պայմաններում, ուժեղ ընտանիքը գլխավոր մեղրաբերքի նախորդակին պետք է ունենա առնվազն Դագանի ութ շրջանակ լիքը վորդ խնամելու չափ ուժ: Տվյալ ժամանակում այդ ուժը վորքան շատ լինի, այնքան ավելի լավ: Իսպի այդ նվազագույնը պետք է ձգտեն մեր բոլոր մեղվապահները:

Յեթե մենք նման ուժը վորպես չափանիշ ընդունենք և մեղուների ընտանիքները պահենք մատնանշված չափով ուժեղ, մասնավորապես այն շրջաններում, վորտեղ յեվրոպական փոտխար շատ է տարածված, նա մեր սոցիալիստական մեղվաբուծությանը քիչ դեպքերում կարող է զղալի վնաս հասցնել:

Իրա համար ել այն շրջաններում, վորտեղ յեվրոպական փոտխարն ավելի շատ է տարածված, մեղուների ընտանիքները պետք է պահել լավագույն պայմաններում տարվա բոլոր յեղանակների պահանջի համաձայն՝ ուժեղ և կենսունակ, վորպեսզի մեղուները կարողանան դիմադրել այդ հիվանդությանը և արդյունավետ լինեն բերքատվության տեսակետից:

Մեղուների ձմեռելու խնդիրը, վոր մեր մեղվապահության ամենաթույլ ողակներից մեկն է հանդիսանում, հսկայական ազդեցութուն ունի ընտանիքների ուժի պահպանման, նրանց ընդհանուր և բարեկեցիկ դրության վրա: Չմեռանոցների վատ կազմակերպման պատճառով մեղվաբուծությունը Խ. Հայաստանի բոլոր շրջաններում էլ շատ է տուժում: Այդ վնասները շատ ավելի յեն, քան այդ կարողանում են պատկերացնել մեր մեղվապահներից



շատ շատերը: Այդ խնդիրը կարեւոր է մեր սոցիալիստական մեղվաբուծութեան համար, սակայն մեր ներկա նյութից դուրս է և այստեղ դրա վրա հնարավոր չէ յերկար կանգ առնել:

Միայն պետք է շեշտել, վոր մեղուների հաջող ձմեռելու գործը լավ կազմակերպելու դեպքում մենք վոչ միայն կկարողանանք մեծ թվով ընտանիքներ ազատել ձմեռային կորուստներից, այլև կկարողանանք առավելագույն չափով նվազեցնել յեվրոպական փտախտի հասցրած վնասները, վորովհետեւ այն ընտանիքները, վորոնք յեղել են ձմեռանոցային լավ պայմաններում, ստիպված չեն յեղել արտաքին ցրտի ազդեցութեան տակ հսկա քանակութեամբ եներզիա և կերապաշար վատնել, և կարողացել են առավելագույն չափով պահել իրենց կենսունակութիւնը. այդ ընտանիքները գարնան նպաստավոր պայմաններում շատ ավելի հեշտութեամբ կկարողանան դարգանալ, ուժեղանալ և պահանջված ժամանակին իրենց ուժի մաքսիմալ չափին հասնել. քան թե նրանք, վորոնք յեղել են վատ պայմաններում և արդեն առավելագույն չափով վատնել են թե իրենց կերապաշարը և թե ուժն ու կենսունակութիւնը:

ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՏԱԽՏԻ ԴԵՄ ԿԻՐԱՌՎԵԼԻՔ ՊՍՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

Առաջին քայլը յեվրոպական փտախտի դեմ պայքարելու ուղղութեամբ, մանավանդ գարնան յեվ ամառվա սկզբներին, պէտք է լինի ընտանիքներն առավելագույն չափով ուժեղ պահելու ուղղութեամբ: Դրանից հետո միայն, յեթե դարձյալ հիվանդութեան դեպքեր են լինում, պետք է դիմել պայքարի այլ միջոցների:

Թափ տալու յեղանակը, վոր առհասարակ գործադրվում է ամերիկյան փտախտի դեմ պայքարելիս, հանձնարարվում է նաև գործադրել յեվրոպական փտախտի դեմ: Նրանով վարակված ընտանիքների և պարագաների

(փեթակներ, շրջանակներ, մեզր և այլն) հետ ևս պետք է վարվել ճիշտ այնպես, ինչպես ամերիկյան փտախտի դեպքում:

Յեվրոպական փտախտի դեմ, բացի սովորական ձևով թափ տալուց, արտասահմանում առհասարակ գործադրվում են և հետևյալ միջոցները.

1. Հիմք ընդունելով այն, վոր «նպաստավոր պայմաններում մեղուները շատ հեշտութեամբ կարողանում են մաքրել իրենց բջիջներից յեվրոպական փտախտով վարակված յեվ մահացած վորդերի մնացորդները յեվ այնպես մաքրել, վոր հեշագայում նույն այդ բջիջներում խնամված վորդերը չեն վարակվում այդ հիվանդութեամբ» (Ֆիլիպս),— յեթե միայն վարակումը դարձյալ դրսից չէ լինում, ստեղծում են այնպիսի պայմաններ, վորոնք հնարավորութեամբ կտան մեղուներին մաքրել բջիջներն այն ժամանակ, յերբ տվյալ փեթակում նոր վարակումներ տեղի ունենալու հնարավորութեամբ չկան: Դրա համար յեվրոպական փտախտով վարակված ընտանիքի մայրն առհասարակ հեռացնում են ընտանիքից, 5—6 որ հետո այդ ընտանիքում յեղած մայրապտուկները փչացնում և ընտանիքը թողնում են բոլորովին վորր: Յերբ մահացած վորդերը հեռացված են,— վոր շատ հեշտութեամբ կարելի յե պարզել ստուգման միջոցով,— ընտանիքին վերադարձնում են իր մայրը, յեթե նա լավ վորակի յե, հակառակ դեպքում տալիս են բեղմնավորված, յերիտասարդ և կենսունակ մայր: Յեթե ստուգումից պարզվի, վոր դեռ մի քանի հիվանդ վորդեր կան, և ընտանիքը բավականին ուժեղ է, նոր մայրը փակում են մայրավանդակում այն ձևով, վոր մեղուները չկարողանան նրան դուրս հանել, կամ ինքը չկարողանա դուրս գալ: Մայրն ազատ արձակում են այն ժամանակ, յերբ ամբողջ հիվանդ և փչացած վորդերը հեռացված են բջիջներից: Բուժման այս մեթոդը չեն հանձնարարում կիրառել, յեթե հիվանդ ընտանիքն առնվազն հինգ լիք օրջանակ (Lակսոնի) վորդ խնամելու չափ ուժ չունի:

2. Յեվրոպական փտախտով վարակված ընտանիքները դասավորում են ըստ ուժի և ուժեղների մի մասը թափ տալիս քամած չեչերով շրջանակների վրա, և վոչ թե մոմաթերթով շրջանակների վրա: Միևնույն ժամանակ փոխում են նրանց մայրերը և տալիս պահանջված վորակով մայրեր: Յեթե մեղրաբերք չկա, տրված չեչերը կարող են պարունակել վորոշ քանակությամբ մեղր, անկախ այն բանից, թե այդ մեղրը կամ շրջանակները վերցրած են յեվրոպական փտախտով վարակված ընտանիքից, թե ոչ, միայն թե նրանք վոչ մի դեպքում չպետք է վերցված լինեն ամերիկյան փտախտով վարակված ընտանիքներից: Այն վորդերը, վորոնք վերցված են վերոհիշյալ թափ տրված ընտանիքներից, պետք է դարսել մյուս ավելի թույլ և վարակված ընտանիքների վրա, վորպեսզի նրանք ևս ուժեղանան և հավասարվեն նախորդ ընտանիքների ուժին: Հետո այդ ընտանիքները ևս նույն ձևով թափ են տալիս դարձյալ մաքուր չեչերի վրա:

3. Բնից վերցնում են հիվանդ վորդ ունեցող բոլոր շրջանակները և դնում մի վերնահարկի (կորպուսի) մեջ: Մայրը և մի շրջանակ վորդ ու ձու թողնում են բնում, վերցրած շրջանակների տեղ դնում մոմաթերթով շրջանակներ կամ մաքուր չեչեր, նրա վրա դնում հանիմանյան ցանց և հետո հիվանդ շրջանակներ պարունակող կորպուսը կամ, հակառակը, հիվանդ վորդերը թողնում են վարի արկղում (փեթակում), վրան դնում հանիմանյան ցանց, իսկ մայրը՝ վերև հիշված պայմաններում (մի շրջանակ վորդ ու ձու և մաքուր շրջանակներ), տեղավորում հիմնական փեթակի վրա:

4. Մեղվապահներից վոմանք, յեվրոպական փտախտ հայտաբերելիս, ուժեղ կերպով կերակրում են այդ ընտանիքները մեղրով կամ շաքարաջրով, և այդ շատ դեպքում լավ արդյունք է տալիս, վորովհետև դրանով ընտանիքը կերապաշարով ապահովվում է, աշխատանքի վորոշ

զրգիռ է ստանում և հնարավորություն՝ նորմալ կերպով պարգանալու: Բայց նկատի ունենալով ընտանիքները կերակրելու հետ կապված դժվարությունները, Ֆիլիպսը շեշտում է, վոր յեվրոպական փտախտի դեմ պայքարելու համար «ավելի ձեռնառ յե ընտանիքները հեկց առնանից լրիվ ապահովել կերապաշարով, քան քե՛ նրանց կերակրել գառնանը», իսկ յերբ կարիք է գագցվում կերակրել և հնարավորություն կա, իհարկե, կերակրում են:

Բուժման վերոհիշյալ ձևերի առավելությունը, մասնավորապես, գտնում են նրանում, վոր, ըստ նրանց, յեվրոպական փտախտի դեմ պայքարելու համար անհրաժեշտ չե անպայման սպասել մեղրաբերքին և ընտանիքը թափ տալ անպայման մոմաթերթով շրջանակների վրա, ինչպես այդ ընդհանրապես անհրաժեշտ է ամերիկյան փտախտի դեմ պայքարելու դեպքում, այլ յեվրոպական փտախտը կարելի յե բուժման յենթարկել ամեն ժամանակ, յերբ նա հայտաբերվում է:

Այդ բոլոր միջոցները մեզ մոտ դեռ ևս գտնվում են փորձնական շրջանում: Այդ իսկ պատճառով յեվրոպական փտախտի դեմ, սովորական ձևով թափ տալուց բացի առայժմ այլ միջոցներ չենք հանձնարարում:


#### ՏՈՊՐԱԿԱՋԵՎ ՓՏԱԽՏ

Տոպրակաձե փտախտը, վորը միևնույն ժամանակ կոչվում է «պարկաձե՛վ փտախտ», «տպրակաձե՛վ վորդ» կամ «պարկաձե՛վ վորդ», մեզ մոտ ավելի շատ տարածված է Ալլաիվերդու, Իլիլիանի, Իշեվանի, Ղարաքիլիսալի և Ստեփանավանի շրջաններում: Մեղվաբուժական մյուս շրջաններն ևս զերծ չեն այդ հիվանդությունից:

Ինչպես ամերիկյան և յեվրոպական փտախտը, նույնպես և տոպրակաձե փտախտը վարակում է մեղունների վորդերին: Թեև վոչ այնքան վտանգավոր, վորքան մյուս յերկու տեսակները, տոպրակաձե փտախտը նույնպես կա-

բող և խոշոր ֆրասներ հասցնել մեր սոց-մեղվաբուծութեանը, յեթե նրա դեմ ևս պետք յեղած միջոցառումները չգործադրվեն և մեղուների ընտանիքները չպահվեն ու չխնամվեն այնպիսի պայմաններում, վորոնք հնարավորութիւն կտան նրանց ավելի հեշտութեամբ գիմադրելու փտախտի այդ ձևին:

Փտախտի մյուս ձևերի հետ համեմատած, տուրակաձև փտախտից առհասարակ ավելի քիչ ընտանիքներ են փչանում, բայց այդ հիվանդութեամբ վարակված ընտանիքներ



Նկ. 7. Տուրակաձև փտախտի տարբեր աստիճանները—ա, բ, գ, դ՝ վորզն իր փտումի տարբեր աստիճաններում, յե՛ թեփուկը:


ըր ևս շատ դեպքում նույնքան թուլանում և անարդյունավետ են դառնում և նույնիսկ փչանում, յեթե պետք յեղած միջոցառումները չգործադրվեն:

Տուրակաձև փթախտով վարակված վորդը (նկ. 7, 8) ևս մահանում է բջիջը սերեկվելուց հետո, բայց նախքան հարսնուկի լրիվ կերպարանք ստանալը (յերկու որ առաջ): Շատ հազվագյուտ դեպքերում միայն կարելի յե տեսնել տուրակաձև փտախտով վարակված հարսնուկ: Հաճախ բջջի սերեկը քանդված, բացված է լինում մեղուների կողմից, իսկ չքանդված սերեկներն իրենց վրա, առհասարակ,

ուսկ, ունենում են մեկ կամ ավելի ծակոտիներ, ինչպես ամերիկյան փտախտի դեպքում: Այդ ծակոտիները յերբեմն փոքր են լինում, իսկ հաճախ այնքան խոշոր, վոր բջջի մեջ յեղած մահացած վորդի գլուխը շատ հեշտութեամբ կարելի յե տեսնել (նկ. 7 բ.):

Տուրակաձև փտախտով մահացած վորդը միշտ կոնակի վրա պառկած է լինում՝ բջջի ցածր կողքին և գլուխը վեր ցցած (նկ. 7):

Այս փտախտով դեռ նոր մահացած վորդի գույնը լինում է բաց դեղնագույն, բայց մի քանի որվա ընթաց



Նկ. 8. Տուրակաձև փտախտի տարբեր աստիճանները—ա՝ նոր վարակված վորդ, բ, գ՝ թեփուկը (բ՝ բջջի վրայի կողմից գիմադրված, գ՝ բջջի յերկարութեամբ կողքից դիտված):

քում գլուխը կարծրանում է, սևանում և ստանում սրճագույն տեսք: Վորջան ավելի յե փտում վորդը, այնքան ավելի մուգ գույն է ստանում և յերբեմն նույնիսկ գրեթե ամբողջութեամբ սևանում է:

Տուրակաձև փտախտով վարակված վորդի մաշկը փտելու ընթացքում կարծրանում է, այնպես վոր նրա ամբողջ մարմինը կարելի յե առանց դժվարութեան դուրս

քաշել բջից, փորպես մի ջրայի տոպրակ (նկ. 8 ա), այդ պատճառով ել կոչվում է «սուպրակաձեմի փսալս»: Յեթե այդ տոպրականման մաշկը պատենք, միջից դուրս կըթափվի սպիտակ, ջրալի և կարծես մանր ավազախառն հեղուկ: Իր տոպրականման վիճակում մահացած վորդի տեսքը շատ դեպքում նմանում է առողջ վորդի տեսքին:

Վորդն այդ վիճակում յեթե մեղուների կողմից չի հեռացվում բջից, նրա միջի հեղուկը կամաց-կամաց գործընթանում է, մաշկը կծկվում և իր ձևը կորցնում, իսկ հետագայում չորանալով վերածվում է թեփուկի (նկ. 8—բ, գ): Այդ թեփուկը, յեվրոպական փտախտից մահացած վորդի թեփուկի նման, չի կպչում բջի պատին և մեղուները շատ հեշտությամբ կարողանում են բջիջները մաքրել նրա մնացորդներից, ավելի հեշտ քան յեվրոպական փթախտի դեպքում, և այնքան հեշտ, վոր նույնիսկ, յեթե շրջանակը հորիզոնական դիրքով բռնած թափ տրվի, շատ դեպքում այդ թեփուկները ինքնին վայր են թափվում: Տոպրակաձե փտախտով մահացած վորդը վոչ մի կերպ թելանման չի ձգվում և, առհասարակ, հոտ չունի:

Նրա գույնն որըստորե փոխվում է, սկսած առողջ վորդի տեսքից մինչև թեփուկի վերածվելը, և յեթե մի որ ճշտորեն նկարագրենք նրա տեսքը՝ գույնի տեսակետից, այդ նկարագրությունը նույն վորդի հաջորդ որվա տեսքին չի կարող համապատասխանել: Բացի այդ, շատ հաճախ այս փտախտով վարակված բոլոր վորդերն ել միշտ միևնույն տեսքը չունեն, վորը չփորձված մեղվապահին կարող է շփոթության մեջ գցել, յեթե փթախտի մյուս տեսակները ևս գոյություն ունեն նույն մեղվապահուցում, և այդ մեղվապահը հարկադրված է մեկը մյուսից տարբերել: Սակայն, այստեղ նկարագրված բոլոր ախտանիշները նկատի ունենալու դեպքում, առանձին վոչ մի դժվարություն չի կարող լինել:

Տոպրակաձե փտախտով վարակվում են թե բանվոր

մեղուների և թե բոտերի վորդերը: Ըստ յերևութին մայրացու վորդերն ել են վարակվում, թեև այդ մինչև այժմ փաստացիորեն չի ապացուցված:

Ինչպես ամերիկյան փտախտը, նույնպես և տոպրակաձե փտախտը, ըստ յերևութին, վարակում են բոլոր ցեղի և տեսակի մեղուների վորդերին:

Տոպրակաձե փտախտն ամենից շատ տարածված է լինում գարնանը, բայց և այնպես կարելի յե նկատել տարվա մյուս յեղանակներին ևս, յերբ այդ հիվանդության զարգացման համար նպաստավոր պայմաններ կան:

Տոպրակաձե փտախտի պատճառը (առաջացնողը) մի «վիրուս է» (virus), այնքան փոքր մի որգանիղմ, վոր ամենաուժեղ մանրադիտակով անգամ հնարավոր չի լինում տեսնել, և բացի այդ, նա անցնում է գտող ամենանուրբ գործիքներից: Այդ որգանիղմն անհամեմատ ավելի արագ է զարգանում, քան թե, առհասարակ, մյուս միկրո-որգանիղմները, վորոնք նույնպես արագ զարգանալու հատկություն ունեն: Դոկտոր Ուայտը, վոր տոպրակաձե փտախտի առաջին ուսումնասիրողն է յեղել, հաշվի յե առել, վոր վարակված մի վորդի մեջ յեղած վիրուսները, յեթե մի բաժակ շաքարաջրի մեջ խառնենք և մի առողջ ընտանիք կերակրենք, բավական կլինի ընտանիքը վարակելու և առնվազն 3000 վորդ մահացնելու, այսինքն՝ այդ վիրուսը մի շաքարթվա ընթացքում առնվազն 3000 անգամ կարող է բազմանալ: Յեթե այդ վիրուսները ևս գործադրվեն նույն ձևով, կարող են վարակել 3000 ընտանիք:

Դոկտոր Ուայտի փորձերը նույնպես ցույց են տվել, վոր տոպրակաձե փտախտի վիրուսը  $58^{\circ}$  Յել. տաք ջրի մեջ փշանում է 10 րոպեյի ընթացքում: Նույնչափ դիմանում է  $70^{\circ}$  Յ. տաք մեղրի մեջ, իսկ սենյակի սովորական ջերմության մեջ՝ 22 օր, արևի տակ՝ (սեպտեմբեր ամսին)՝ 4 ժամ, մեղրի մեջ՝ 24 օր, և  $1\%$  կարբոլյան թթվի մեջ՝ 38 օր: Մինչև այժմ, հիմնականում դեռ լրիվ պարզված չէ,

Թե իսկապես ինչ ձևով ե տարածվում տոպրակաձև փր-  
տախար թե ընտանիքի ներսում, թե ընտանիքից ընտա-  
նիք: Շատ հավանական է, վոր յեվրոպական փտախտի  
հման նույն կամ հման ճանապարհներով տարածվում է և  
տոպրակաձև փտախտը:

Փտախտի ուսումնասիրութեամբ զբաղվող զիտնա-  
կաններ և առանձին մեղվաբուծներ մինչև այժմ նույնիսկ  
հարկ չեն համարում տոպրակաձև փտախտի դեմ պայքա-  
րելու առանձին միջոցառումների դիմել: Դոկտոր Ուայտն  
իր յերկարատև փորձերից յեղնելով յեղրակացնում է, վոր  
յեթե վորևե մեկը ցանկանա այդ ուղղութեամբ աշխատել,  
պետք է անպայման նկատի ունենա հետևյալ փաստերը:

1. Տոպրակաձև փտախտը կարող է գոյութիւն ունե-  
նալ տարվա ամեն մի յեղանակում, յերբ մեղուները վորդ  
են ինձամում, բայց ավելի շատ տարածված է լինում զար-  
նանը: Այդ հիվանդութեան կարելի յե հանդիպել տարբեր  
կլիմայական պայմաններ ու տարբեր կերի բազա ունեցող  
բոլոր շրջաններում:

2. Այդ հիվանդութիւնը շատ հաճախ վարակիչ է լի-  
նում, բայց ավելի մեղմ ընույթ ունի և ավելի դանդաղ է  
տարածվում, քան թե փտախտի մյուս ձևերը:

3. Մեղունների բոլոր ցեղերն ու տեսակները վարակ-  
վում են այս հիվանդութեամբ:

4. Մեղուններն ուժեղ ձգտում են ցույց տալիս այս  
հիվանդութեան դեմ պայքարելու և նրանից ազատվելու,  
յերբ բոլոր նպաստավոր պայմանները գոյութիւն ունեն  
մեղունների զարգացման համար: Այդ ձգտումն ավելի ու-  
ժեղ է և արդյունավետ մեղրաբերքի ընթացքում:

5. Յեթե ընտանիքը վարակված է տոպրակաձև փր-  
տախտով և միևնույն ժամանակ անուշադրութեան է մատ-  
նըրված ու անխնամ թողնված, այդ ընտանիքը կարող է  
արագ կերպով թուլանալ, դառնալ անարդյունավետ և նույ-  
նիսկ կարող է հանգչել:

6. Տոպրակաձեվ փտախտ առաջացնող վիրուսը շատ  
հեշտությամբ կորցնում է իր կենսունակությունը: Յերե  
այդ հիվանդությամբ վարակված վորդերը մի ամիս  
մնում են բջջում, ըստ յերեվույթին, վիրուսն անընդու-  
նակ է դառնում վերսին վարակում առաջացնելու: Այդ  
վիրուսը նույնպես մի ամսից ավելի չի կարող կենդանի  
մնալ մեղրի յեվ ծաղկափոռու մեջ:

Մահացած վորդից մուցած թեփուկը բոլորովին չի  
կաշում բջջի պատերին կամ հատակին և մեղուններն առանց  
դժվարութեան կարողանում են հեռացնել:

Այդ բոլոր հանգամանքները նկատի առնելով, դոկ-  
տոր Ուայտը գտնում է, վոր «եստականորեն հնարավոր  
է տոպրակաձեվ փտախտով վարակված ընսանիքների շրջա-  
նակները 1—2 ամիս պահել յեվ հետո դարձյալ գործածել»:  
Իր յերկարատեվ փորձերի հիման վրա նա նույնպես գտնում է,  
վոր վոչ մի դեպքում անհրաժեշտ չի տոպրակաձեվ փտախտով  
վարակված ընսանիքների շրջանակները փչացնել: Նա նույ-  
նիսկ անմտություն է համարում տոպրակաձեվ փտախտով վա-  
րակված ընսանիքների փերակների ներսի կողմը խանձել  
պայտալնի լամպով: Այդ առանշութեամբ պրոֆ. Յիրիպան  
ասում է, վոր «տոպրակաձեվ փտախտն այնքան էլ վսան-  
գավոր հիվանդություն չէ յեվ առանձնապես անհրաժեշտ  
չէ նրանով վարակված ընսանիքները բուժել»: Նույն կար-  
ծիքին են և Ռուսը, Դադանը և այլ աչքի ընկնող մեղ-  
վաբուծներ:

Պարզ յերևում է, վոր այն, ինչ ասված է ընտանիքի  
ուժի կարևորութեան մասին յեվրոպական փտախտի դեպ-  
քում, նույնն ասվում է և տոպրակաձև փտախտի նկատ-  
մամբ, վորովհետև յերկու դեպքումն էլ հիվանդության դեմ,  
բացի թափ սալուց, պայքարելու համար ձեռք առնվելիք  
մյուս միջոցները հիմնված են այն հանգամանքի վրա  
վոր մեղունները, հնարավորության դեպքում, կարողանում

եմ մաքրել բջիջները յեվ հեռացնել փերակից վարակ-  
ված կամ վարակումից մահացած վորդերը յեվ ցրանց  
մնացորդները՝ քեփուկները:

Այնքան ժամանակ, վորքան մեզ մտա վերոհիշյալ խըն-  
դիրները չեն քննված ու փորձնականում ապացուցված, իսկ  
և. Հայաստանի վորոշ շրջաններում տոպրակաձև փտախ-  
տը կրում է բավականին սուր բնույթ, այդ հիվանդութուն-  
ների դեմ ևս առայժմ հանձնարարում ենք գործադրել  
թափ տալու միջոցը:

### ԽԱՌՆ ՓՏԱԽՏ

Հաճախ պատահում է, վոր միևնույն փեթակում միև-  
նույն շրջանակի վրա միաժամանակ նկատվում են փտախտի  
տարբեր տեսակներ, և մեղվապահներից վրմանք կարծում  
են, վոր փտախտի մի տեսակը փոխվում է մի ուրիշ տե-  
սակի, և այլն: Նման կարծիքը սխալ է:

Կենդանական աշխարհով քիչ-շատ հետաքրքրվողները  
շատ լավ գիտեն, վոր մի կենդանի միևնույն ժամանակ  
կարող է վարակված լինել կամ տառապել մի քանի տե-  
սակ հիվանդութուններով, վորոնք մեկը մյուսի հետ վոչ  
մի կապ չունեն, և կամ յեթե ունեն, մեկը կարող է  
նպաստավոր պայմաններ ստեղծել մյուսի զարգացման  
համար: Նույնն է կատարվում և մեղուների մեջ:

Մեղուների փորլուծութունը, վորը ձմեռային վատ  
պայմանների և վատորակ կերապաշարի հետևանք է,  
յեթե հիվանդութուն համարենք, վոչ մի դեպքում «ճոզե-  
մա» հիվանդության չի փոխվում, բայց շատ հավանական  
է, վոր նպաստավոր պայմաններ է ստեղծում մեղվի մեջ  
նոգեմայի զարգացման համար: Յեվ այդ է պատճառը, վոր  
այն շրջաններում, վորտեղ նոգեմա գոյութուն ունի, նույն  
շրջանում փորլուծութունով տառապող մեղուներն ավելի  
շատ են վարակված լինում նոգեմայով, քան թե մյուսները:

Մեղուների փտախտ հիվանդության դեպքում ևս  
կարող են պատահել նման դեպքեր: Որինակ, ամերի-  
կյան փտախտով վարակված ընտանիքը յերբ բավականին  
թուլանում է, յեվրոպական փտախտն ևս հնարավորու-  
թյուն է ունենում մուտք գործելու և զարգանալու  
ավյալ ընտանիքում: Նույնը կարող է անել և տուպրակաձև  
փտախտը: Յեվ կամ այդ հիվանդության տարբեր ձևերը  
միաժամանակ կամ տարբեր ժամանակում, մեկը մյուսից  
անկախ, մուտք են գործում փեթակի մեջ և այդպես առաջ  
է գալիս խառն փտախտ:

Խառն փտախտի դեմ պայքարելու համար ևս պետք  
է գործադրել թափ տալու միջոցը:

Բացի վերոհիշյալ փտախտից, մեղվաբուժական առու-  
յա աշխատանքների ընթացքում, յերբեմն պատահում ենք  
հատ ու կենտ կամ մասսայականորեն փչացած վորդերի,  
վորոնք վոչ թե հիվանդութունների, այլ պատահականու-  
թյունների հետևանք են, որինակ,—

Գարնան ընթացքում, յերբ մեղուները բավականին  
լայնացրել են իրենց բունը և մեծ քանակությամբ վոր-  
դեր են խնամում, յեթե հանկարծակի ուժեղ ցրտեր լի-  
նեն, մեղուներն ստիպված փոքրացնում են իրենց կծիկի  
ծավալը և վորդերի մեկ մասը բաց են թողնում: Ինչ  
խոսք, վոր բաց, կնքված և ամեն հասակի անպաշտպան  
մնացած այդ վորդերը ցրտից սառչում են և մահանում:  
Փչացած վորդի այսպիսի զանգվածը գտնվում է, առհա-  
սարակ, ընդհանուր վորդային զանգվածի ծայրամասերում,  
հատկապես ցածր մասերում. յեթե մնացած վորդերի մեջ  
հիվանդութուն չկա, ուրեմն և ընտանիքն առողջ է:

Յեթե վորդի սառելը տեղի է ունենում ուժեղ ընտանիք-  
ներում, հենց վոր նորմալ աշխատանք է սկսվում, մեղուները  
դուրս են տանում այդ սառած վորդերին, նախքան նրանց  
նեխումը և զբանով վերջանում է: Իսկ թույլ ընտանիքներում,  
վորտեղ աշխատանքն ավելի նվազ և դանդաղ է կատար-

վում, ստուծ վորդերի հեռացնելն ուշանում է, նրանք շատ դեպքում սկսում են նեխել, բայց առանց ցուցարե-  
րելու փտախտի ձևերի մյուս ախտանիշները: Մեղուները  
ձմեռանոցից դուրս դնելուց հետո, ամենակարճ ժամանա-  
կում ընդհանրապես բոլոր ընտանիքները, և մասնավորա-  
պես թույլ ընտանիքները պետք է լավ ապահովել տաքա-  
ցումներով, վորպեսզի ցուրտը չկարողանա զգալի վնաս  
հասցնել նրանց: Նման դեպքերում ևս թույլ ընտանիք-  
ները պետք է ուժեղացնել:

Յերբեմն վաղ գարնանը, յեթե մեղուները մեծ բանա-  
կուլթյամբ վորդեր են խնամում, իսկ պետք յեղած բա-  
նակուլթյամբ ծաղկափոշի չկա նրանց արամազրուլթյան  
տակ՝ սպիտակուցային նյութերի պակասութեան պատ-  
ճառով, — վորոնք ստացվում են ծաղկափոշուց, դարձյալ  
բավական քանակութեամբ վորդեր են մահանում: Այդ  
վորդերը շատ են նմանում տոպրակածև փտախտով մա-  
հացած վորդերին: Բայց մեղուները շուտով մաքրում  
են նրանց և, բավարար ծաղկափոշի լինելու դեպքում,  
նման յերևուլթ ալկա չի կրկնվում:

Յերբ ընտանիքն ունի բոռածու մայր կամ բոռածու  
մեղուներ, նրանց ձվերից առաջ յեկած բոռավորդերի  
վորոշ մասը յերբեմն մահանում է: Մահացած այդ վորդե-  
րի սերեկները յերբեմն լինում են ծակոտկեն, հոտը նման  
է ամերիկյան փտախտի հոտին, բայց մածուցիկ չեն, չեն  
ձգվում, վորով վոմանք շփոթում են յեվրոպական փտախ-  
տի հետ: Իսկ յեթե նկատի ունենանք, վոր միայն բոռա-  
վորդերն են մահացածները, խնդիրն ինքնին պարզվում է:

Բացի այս պատճառներից, կարելի յե պատահել ան-  
հայտ պատճառներից մահացած հատ ու կենտ վորդերի:

Յերբ աննորմալ դրութեան մեջ վորդեր են նկատ-  
վում վորեւ ընտանիքում, պետք է տեղն ու տեղը պար-  
զել պատճառները: Յեթե այդ հնարավոր չէ, անհրաժեշտ է  
«կասկածելի» համարել այդ ընտանիքը, մինչև վոր ավելի  
հաստատ տվյալներ կլինեն նրա սուղղութեան վերաբերյալ:

Փ Ս Ա Ք Տ Շ Ի Վ Ա Ս Ն Դ Ո Ւ Յ Ց Ա Ն Շ Ա Շ Վ Ա Ս Ո Ւ Մ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	
Ներկայացվող քանակը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը	
Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը	
Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը		Մեղուների ընդամենը	

ՄԵՂՈՒՆԵՐԻ ՓՏԱԽՏ ՇԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՑԱՐԲԵՐ ԶԵՎԵՐԻ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

№	ՄՄԵՐԻԿՅԱՆ ՓՏԱԽՏ	ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՏԱԽՏ	ՏՈՊՐԱԿԱԶԵՎ ՓՏԱԽՏ	
1	Փտախտն առաջացնող որդանիզմը	Հարվիի բացիլ—սպոր կազմող, խիստ դիմացկուն սովորական պայմաններին	Պլուտոնի բացիլ—սպոր չի կազմում, դոչ շատ դիմացկուն	Վիրուս—մանրադիտակով անտեսանելի, շատ քիչ դիմացկուն
2	Նրջանակների վրա բջիջների և վորդերի ընդհանուր տեսքը	Ցիրուցան և անկանոն դրված վորդեր. բնական գույնը կարցրած, ցածր ընկած և մեծ մասամբ ծակոտկեն սերեկներով բջիջներ	Ցիրուցան, անկանոն դրված բաց վորդեր և փակ բջիջներ, հիվանդ վորդեր՝ ընդհանրապես բաց բջիջներում	Նվազ ցրվածություն, հիվանդ վորդեր առհասարակ բաց բջիջներում. փակ սերեկներից վոմանք ծակոտկեն, բայց վոչ շատ ցածր ընկած
3	Վարակված վորդի քանակը	Ցեղած փակ վորդերի մեծագույն մասը վարակված է լինում, յեթե հիվանդությունը յերկար ժամանակ մնում է փեթակում	Թույլ ընտանիքների մեջ բազմաթիվ վարակված վորդեր կարելի է նկատել՝ բաց բջիջներում	Քիչ քանակությամբ վարակված վորդեր կարելի յե նկատել՝ բաց բջիջներում
4	Վարակված վորդը մահանում է	Ընդհանրապես սերեկվելուց հետո	Առհասարակ յերբ վորդը 3—4 որական է	Համարյա միշտ սերեկվելուց հետո
5	Վարակված վորդի դիրքը բջիջում	Միշտ ընկած է բջիջի ցածր կողքին յերկարած դիրքով	Վորոչ դիրքը չունի, կարելի յե նկատել բջիջ վորեւե մասում	Միշտ ընկած է կանակի վրա՝ բջիջի ցածր կողքին
6	Վարակված վորդի գույնը	Սև սրճագույն, նվազ փոփոխական	Դեղնագույն, դորչ կամ մուգ դեղնագույն, յերբեմն սև, փոփոխական	Գորչ դեղնագույն կամ սև գորչագույն: Գլուխը միշտ սև, փոփոխական
7	Վարակված վորդի տեսակը	Ընդհանրապես բանվոր մեղուներին վորդեր, հազվադեպ դեպքում բոնավորդեր կամ մայրավորդեր	Ցերեք տեսակի վորդերն էլ վարակվում են	Ընդհանրապես բանվոր մեղուներին վորդեր, հազվադեպ դեպքում բոնավորդեր, գուցե և մայրավորդեր
8	Վարակված վորդի կազմվածքը	Վորոչ ժամանակ մածուցիկ և թելանման ձգվող. կարծես հալած լինի	Մածուցիկ չի, յերբեմն կարող է ձգվել փրած ոեղին նման	Վոչ մի մածուցիկություն չունի, մեջն սպիտակ, ջրալի և կարծես ավաղախաան
9	Վարակված (նեխած) վորդի հոտը	Սուր. նմանում է հալած սուրճի հոտին	Ինչնուրույն հոտ չունի, յերբեմն անախորժ թթու հոտ	Չունի
10	Ծնչափողերը և մաշկը	Մահանալուց հիտո շնչափողերը պարզ չեն յերևում, մաշկը հալած է	Ծնչափողերը հաճախ պարզ յերևում են, մաշկը վորոչ չափով կարծր է մնում	Ծնչափողերը չեն յերևում. մաշկը տապրակի նման մնում է
11	Թեփուկը	Սև սրճագույն, վորոչ չափով փայլուն, շատ դժվար է բջիջ	Գորչ կամ սև սրճագույն, հեռուությամբ կարելի յե անջատել	Մուգ կամ սև, շատ հեշտությամբ կարելի յե անջատել

Պատ. խմբագիր Է. Սարուխանյան

Վահրան՝ Սբ. Գրիգորյան  
Սրբազրիչ՝ Խ. Այվազյան

Գլավիլիտի լիազոր № 9—86

պատկեր № 301

Հրատ. № 217

տիրած 2000

Հանձնվել է արտագրություն 1935 թ. մայիսի 5-ին

Ստորագրվել է տպագրելու 1935 թ. հունիսի 10-ին

Յերեան, Գյուղհրատի տպարան, Նալբանդյան № 11



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԵՐԵՎԱՆ

Համար	Ազգանուն	Քաղաք	Ծննդյան օր	Մահվան օր
1	Աբրահամ	Երևան	1890	1970
2	Արամ	Երևան	1895	1975
3	Արշակ	Երևան	1900	1980
4	Արտուր	Երևան	1905	1985
5	Արշակունի	Երևան	1910	1990
6	Արտուրյան	Երևան	1915	1995
7	Արտուրյան	Երևան	1920	2000
8	Արտուրյան	Երևան	1925	2005
9	Արտուրյան	Երևան	1930	2010
10	Արտուրյան	Երևան	1935	2015

ՀՀ Ազգային գրադարան  
  
 NL0977311

80 Կպ.

11

27184



**Վ. ԴԱԳԵՏՅԱՆ**

---

**БОЛЕЗНЬ ПЧЕЛ—ГНИЛЕЦ  
И СПОСОБЫ БОРЬБЫ**

**СЕЛЬХОЗГИЗ—ЭРԻՎԱՆ**

**1 9 3 5 ●**